«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 7

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 9

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 10

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Բանկը 12
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն 12
3. Կարևոր հաշվապահական գնահատումներ և հաշվապահական հաշվառման քաղաքականությունների կիրառման գնահատման դատողություններ 42
4. Վերադասակարգում 44
5. Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները 45
6. Տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները 45
7. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր 45
8. Զուտ արտարժութային եկամուտ 46
9. Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում 46
10. Այլ եկամուտ 46
11. Այլ ծախսեր 46
12. Շահութահարկի գծով ծախսեր 46
13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 48
14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ 49
15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 49
16. Հակադարձ հետգնման/հետգնման պայմանագրեր 50
17. Հաճախորդներին տրված վարկեր 51
18. Ներդրումային արժեթղթեր 55
19. Հիմնական միջոցներ 56
20. Ոչ նյութական ակտիվներ 57
21. Այլ ակտիվներ 57
22. Թողարկված պարտքային արժեթղթեր 58
23. Այլ փոխառու միջոցներ 58
24. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 60
25. Ստորադաս փոխառություն 61
26. Այլ պարտավորություններ 61
27. Սեփական կապիտալ 61
28. Ներդրումների վերագնահատման պահուստ 62
29. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ 63
30. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 64
31 Կապիտալի ռիսկի կառավարում 69
32 Ռիսկի կառավարում 69
33 Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ 91
34 Հետագա իրադարձություններ 94

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Բանկի ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին
- Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնություններն արտացոլելու և ներկայացնելու, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են Բանկի ղեկավարության կողմից 2019 թ. ապրիլի 30-ին:

Ստորագրված է ղեկավարության կողմից՝

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 30, 2019 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ.՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2018 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2019 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային

Հաճախորդներին տրված վարկերի ակնկալվող կորուստների գնահատում և չափում

Մենք ուշադրություն ենք հրավիրել այս հարցին, քանի որ նշանակալի աճի գնահատումը և ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափումը ներառում է էական դատողություններ, գնահատման անորոշություններ: Ինչպես նաև, ՖՀՄՍ 9 ստանդարտին անցումը կապված է նոր ստանդարտի բարդ պահանջների և նոր տեխնիկաների կիրառման հետ, որոնք պահանջում են փոփոխել ԱՎԿ գնահատման և չափման առկա մոդելները և ստեղծել նոր մոդելներ:

Հավաքական հիմունքով գնահատված վարկերի գծով ԱՎԿ չափումը ներառում է ռիսկի վարկանշման բարդ համակարգ՝ հիմնված պատմական տվյայլների վրա՝ ճշգրտված համապատասխան կանխատեսումների համար:

Անհատական հիմունքով գնահատված վարկերի գծով ԱՎԿ չափումը հիմնված է ապագա դրամական հոսքերի գնահատման վրա, ինչը պահանջում է վարկառուի ընթացիկ և ապագա ֆինանսական վիճակի, գրավի արժեքի և հնարավոր հետևանքների հետագա իրադարձությունների գնահատականի վերլուծություն:

Մասնավորապես, մենք առանձնացրել ենք հետևյալը՝

- ԱՎԿ գնահատման հիմքում կիրառվող հիմնական ենթադրությունները և նշանակալի տվյալները և գործող վարկերի ռիսկի համապատասխան վարկանիշային համակարգը և այս հաշվարկների մոդելների ամբողջականությունը;
- Վարկային ռիսկերի նշանակալի աճի ժամանակին բացահայտում՝ հիմք ընդունելով քանակական և որակական գործոնները;
- Դեֆոլտում գտնվող վարկերի զեղչված դրամական միջոցների հոսքերի հաշվարկի ժամանակ կիրառվող հիմնական ենթադրությունները և նշանակալի տվյալները (փուլ 3):

Տես ֆինանսական գործիքների ծան. 32:

Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում

Մենք ստուգել ենք անհատական և հավաքական հիմունքներով գնահատված վարկերի գծով ԱՎԿ-ի՝ ղեկավարության կողմից իրականացվող գնահատման, չափման և որակի վերահսկման գործընթացների նկատմամբ համապատասխան վերահսկողությունների կառուցվածքը և իրականացումը, ներառյալ վարկային ռիսկերի նշանակալի աճի ժամանակին բացահայտմանն ուղղված վերահսկողությունները:

Մենք ստուգել ենք հավաքական հիմունքով գնահատված վարկերի մոդելներում և համապատասխան ռիսկերի վարկանիշային համակարգերում կիրառվող ենթադրությունները, ինչպես նաև մուտքային տվյալները և վերլուծել ենք այս մոդելների ամբողջականությունը: Մեր աշխատանքներում ներառվել են հետևյալ գործընթացները՝

- Մենք վերլուծել ենք արժեզրկման մեթոդաբանությունը և դիտարկել ենք վարկային ռիսկի աճի վրա հավանական ազդեցությունը և ԱՎԿ-ի չափումը այն տվյալների մասով, որոնք չեն արտացոլվել ղեկավարության կողմից կիրառվող մոդելներում;
- Մենք վերլուծել ենք հիմնական ենթադրությունները՝ հիմնվելով տվյալ ոլորտի փորձի մասին մեր գիտելիքների, Բանկի իրական փորձի և համապատասխան հասանելի կանխատեսումների վրա;
- Մենք ստուգել ենք ԱՎԿ հաշվարկի ժամանակ կիրառվող վարկային մոդելների ամբողջականությունը, իրականացրել ենք ընտրանքային վերահաշվարկներ և համեմատել ենք արդյունքները:

Հավաքական հիմունքով գնահատված վարկերի ընտրանքի համար մենք համոզվում ենք, արդյոք վարկային ռիսկի նշանակալի աճը ժամանակին է բացահայտվել, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, վարկային պայմանների վերանայման հաշվի առնելը:

Անհատական հիմունքով գնահատված վարկերի ընտրանքի համար մենք ստուգել ենք ապագա դրամական հոսքերի վերաբերյալ կանխատեսումները, պատրաստված ղեկավարության կողմից ԱՎԿ-ների չափման նպատակով, ներառյալ արված ենթադրությունների և մուտքային

տվյալների ստուգումը, ինչպես նաև գնահատականների արտաքին համապատասխան հավաստիացումների հետ համեմատումը:

Որոշ դեպքերում ԱՎԿ վերաբերյալ մեր և ղեկավարության տեսակետները տարբերվում են, սակայն, մեր կարծիքով, այդ տարբերությունները հաճախորդներին տրված վարկերի ընդհանուր համատեքստում գտնվում են խելամիտ սահմաններում:

Մենք ստուգել ենք սույն ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը և ամբողջականությունը, ինչպես նաև ՖՀՄՍ պահանջներին համապատասխանությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բայց չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Մենք ակնկալում ենք ձեռք բերել տարեկան հաշվետվությունը աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ: Եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ այլ տեղեկատվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք այդպիսի փաստերի մասին տեղեկություն չունենք: Մեր պարտավորությունն է ծանոթանալ տարեկան հաշվետվությանը, և եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ տարեկան հաշվետվությունը պարունակում էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփիկե Ղևոնդյան
Աուդիտի գործընկեր

Ապրիլի 30, 2019 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2018 թ.	2017 թ.
Տոկոսային եկամուտ	5	17,664,310	14,362,831
Տոկոսային ծախս	5	(8,922,279)	(7,281,637)
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները		**8,742,031**	**7,081,194**
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	6	(435,226)	(161,436)
Զուտ տոկոսային եկամուտ		**8,306,805**	**6,919,758**
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		169,791	(231,661)
Վճարներ և կոմիսիոն եկամուտներ	7	2,125,762	1,799,812
Վճարներ և կոմիսիոն ծախսեր	7	(489,913)	(461,819)
Զուտ օգուտ արտարժույթով առևտրից	8	851,058	1,046,286
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից		741,354	533,283
Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում	9	18,969	-
Այլ եկամուտ	10	268,002	478,068
Զուտ ոչ տոկոսային եկամուտ		**3,685,023**	**3,163,969**
Գործառնական եկամուտ		**11,991,828**	**10,083,727**
Անձնակազմի գծով ծախսեր		(4,144,498)	(3,815,344)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(665,863)	(575,634)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(50,283)	(38,902)
Այլ ծախսեր	11	(4,478,468)	(3,618,191)
Գործառնական ծախսեր		**(9,339,112)**	**(8,048,071)**
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		**2,652,716**	**2,035,656**
Շահութահարկի գծով ծախս	12	(574,690)	(485,259)
Տարվա շահույթ		**2,078,026**	**1,550,397**
Այլ համապարփակ եկամուտ			
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ոչ ենթակա հոդվածներ			
Հիմնական միջոցների վերագնահատում			
Վերագնահատմանը վերաբերող շահութահարկ		4,306	-
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ օգուտ տարվա համար	28	368,625	912,045
Տարվա ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման մասով վերադասակարգման ճշգրտում		(633,682)	(563,536)
Տարվա զուտ փոփոխություն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից		18,811	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներին վերաբերող շահութահարկ		49,249	(69,209)
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ նախքան շահութահարկով հարկումը		**(192,691)**	**279,300**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**1,885,335**	**1,829,697**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային		0.97	0.84
Նոսրացված		0.97	0.84

Ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից ստորագրվել են 2019 թ. ապրիլի 30-ին:

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 30, 2019 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

12 - 94 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ՝			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	38,158,045	35,824,831
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	14	17,468	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	13,175,950	13,030,610
Հակադարձ հետգնման պայմանագրեր	16	3,882,703	4,296,862
Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	17	133,629,775	104,216,558
Ներդրումային արժեթղթեր	18	19,752,226	21,704,806
Հիմնական միջոցներ	19	10,330,854	9,304,697
Ոչ նյութական ակտիվներ	20	506,593	321,118
Այլ ակտիվներ	21	2,243,783	2,103,317
Ընդամենը ակտիվներ		**221,697,397**	**190,802,799**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ՝			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	14	-	7,706
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	2,060,960	1,068,764
Հետգնման պայմանագրեր	16	20,519,048	20,511,989
Այլ փոխառու միջոցներ	23	64,200,798	39,531,118
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	95,828,768	91,703,898
Շահութահարկի գծով վճարման ենթակա գումարներ		273,836	373,239
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	849,982	1,096,006
Ստորադաս վարկեր	25	3,382,149	6,409,601
Այլ պարտավորություններ	26	1,568,539	1,071,870
Ընդամենը պարտավորություններ		**188,684,080**	**161,774,191**
Սեփական կապիտալ՝			
Բաժնետիրական կապիտալ	27	22,266,343	13,708,745
Էմիսիոն եկամուտ		-	33,438
Վերագնահատման հավելաճ		3,055,334	3,157,777
Գլխավոր պահուստ		3,000,000	6,000,000
Ներդրումների վերագնահատման պահուստ	28	1,501,220	1,531,277
Չբաշխված շահույթ		3,190,420	4,597,371
Ընդամենը սեփական կապիտալ		**33,013,317**	**29,028,608**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**221,697,397**	**190,802,799**

12 - 94 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագն. պահուստ	Ներդրումնե րի վերագն. պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ		**4,631,333**	**9,110,850**	**6,000,000**	**3,264,437**	**1,251,977**	**3,310,821**	**27,569,418**
Տարվա շահույթ		**-**	**-**	**-**	-	-	1,550,397	**1,550,397**
Տարվա այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի		**-**	**-**	**-**	-	279,300	-	**279,300**
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի		**-**	**-**	**-**	(106,660)	-	106,660	**-**
Հայտարարագրված շահաբաժիններ		-	-	-	-	**-**	(370,507)	**(370,507)**
Էմիսիոն եկամտի փոխանցում բաժնետիրական կապիտալին		9,077,412	(9,077,412)	-	-	**-**	-	**-**
Մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (նախկինում ներկայացված)		**13,708,745**	**33,438**	**6,000,000**	**3,157,777**	**1,531,277**	**4,597,371**	**29,028,608**
ՖՀՄՍ 9-ին անցման ազդեցությունը	2	-	-	-	-	166,940	(557,248)	**(390,308)**
Վերահաշվարկված		**13,708,745**	**33,438**	**6,000,000**	**3,157,777**	**1,698,217**	**4,040,123**	**28,638,300**
Տարվա շահույթ		-	-	-	-	-	2,078,026	**2,078,026**
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ նախքան շահութահարկով հարկումը		-	-	-	4,306	(196,997)	-	**(192,691)**
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի		-	-	-	(106,749)	-	106,749	**-**
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	27	3,000,000	-	-	-	-	-	**3,000,000**
Հայտարարագրված շահաբաժիններ	27	-	**-**	**-**	**-**	**-**	(510,318)	**(510,318)**
Ներքին շարժ	27	5,557,598	(33,438)	(3,000,000)	-	-	(2,524,160)	**-**
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**22,266,343**	**-**	**3,000,000**	**3,055,334**	**1,501,220**	**3,190,420**	**33,013,317**

12 - 94 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2018 թ .	2017 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		2,078,026	1,550,397
Ճշգրտումներ՝			
Շահութահարկի գծով ծախս		574,690	485,259
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից վնաս		435,226	161,436
Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում		(18,969)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		716,146	614,535
Հիմնական միջոցների օտարումից վնաս		19,421	17,969
Եկամուտ դրամաշնորհներից		-	(240)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս /(օգուտ)		38,625	(276,643)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(741,354)	(533,283)
Այլ եկամուտ		(8,536)	-
Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		**3,093,275**	**2,019,430**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում.			
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(341,402)	(5,319,747)
Հակադարձ հետգնման պայմանագրեր		414,196	255,565
Հաճախորդներին տրված վարկեր		(30,617,959)	(28,720,245)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		(1,651)	-
Այլ ակտիվներ		(141,364)	(602,704)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում).			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-	816,675
Հետգնման պայմանագրեր		7,324	7,287,234
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		4,683,868	25,071,374
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		(7,696)	-
Այլ պարտավորություններ		333,498	(44,802)
Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից դրամական միջոցներ՝ նախքան հարկումը		**(22,577,911)**	**762,780**
Վճարված շահութահարկ		(768,985)	(71,619)
Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		**(23,346,896)**	**691,161**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(5,471,920)	(10,783,114)
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանս. ակտիվների ձեռքբերում		-	(50,169)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից մուտքեր		7,902,154	6,192,862
Հիմնական միջոցների ձեռքբերում		(2,091,328)	(1,533,327)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		379,887	72,089
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(235,758)	(128,757)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**483,035**	**(6,230,416)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Ստորադաս փոխառությունից (մարումներ)/մուտքեր		(3,026,027)	1,009,429
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր		991,753	-
Մուտքեր այլ փոխառու միջոցներից		36,820,997	22,431,803
Այլ փոխառու միջոցների մարումներ		(11,966,830)	(13,786,400)
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում		3,000,000	-
Վճարված շահաբաժիններ		(379,731)	(338,365)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**25,440,162**	**9,316,467**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2018 թ .	2017 թ.
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(206,725)	(12,210)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**2,369,576**	**3,765,002**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13	**35,824,831**	**32,059,829**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	13	**38,194,407**	**35,824,831**

12 - 94 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Բանկը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թ. Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993 թ.-ին «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995 թ.-ին վերակազմավորվել որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ, տրամադրում վարկեր, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 26 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 22 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

	2018 թ. դեկտեմբերրի 31, %	**2017 թ. դեկտեմբերի 31, %**
Սարիբեկ Սուքիասյան	24.51	28.32
Խաչատուր Սուքիասյան	20.84	16.29
Էդուարդ Սուքիասյան	14.60	10.66
Ռոբերտ Սուքիասյան	13.75	14.28
Այլ ոչ մեծ բաժնետերեր	26.30	30.45
Ընդամենը	**100.00**	**100.00**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2019 թ. ապրիլի 30-ին:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Գործունեության անընդհատություն. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմք ընդունելով Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը, ինչը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների կատարում իր գործունեության բնականոն ընթացքում:

Միևնույն ժամանակ, հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են հետևյալ իրադարձությունները և հանգամանքները, որոնք կարող են խնդիրներ առաջացնել Բանկի գործունեության անընդհատության սկզբունքի համար՝

- 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը խախտել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված փոխառության պայմանագրերով սահմանված պայմանագրային որոշ պահանջներ: Հաշվետու ամսաթվի դրությամբ փոխառու գումարները, որոնց մասով դեֆոլտ ՝ տեղի ունեցել, կազմել են 6,741,426 հազար դրամ: Փոխաղությունների ընդհանուր մնացորդը, ներառյալ փոխառությունների պայմանագրային պարտավորությունների փոխադարձ կատարման դրույթները, կազմել է 24,059,690 հազար դրամ (ծան. 23):
- 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընթացիկ ֆինանսական պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ֆինանսական ակտիվները 35,367,320 հազար դրամով, ինչպես ներկայացված է ծան. 32 (գ) (2017 թ.՝ 27,869,735 հազար դրամ):

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ կից ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հիմք ընդունելով Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը, նպատակահարմար է՝ հաշվի առնելով հետևյալը՝

1. Ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան,
2. 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը չի ստացել հետագա ֆինանսավորման դադարեցման վերաբերյալ ծանուցում կամ վարկառուների կողմից վարկերի անմիջապես մարման պահանջ;
3. Հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը ստացել է զիջում երեք վարկատուներից երկուսի կողմից պայմանագրային որոշ պահանջների խախտման մասով: Երրորդ վարկատուի կողմից Բանկը ստացել է էլեկտրոնային հաստատում առ այն, որ վարկատուն չի պահանջելու վարկի վաղաժամկետ մարում;
4. Հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը թողարկել է նոր պարտատոմսեր 2,100 հազար ԱՄՆ դոլարի չափով, մարման ժամեկտը՝ 2022 թ. մարտի 29, ֆիքսված արժեկտրոնային դրույքաչափը՝ 5.25%: 2019 թ. ապրիլի 30-ի դրությամբ Բանկը բաշխել է թողարկված պարտատոմսերի ողջ գումարը (ծան. 34):
5. 2019 թ. Բանկը միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ստացել է ֆինանսավորում (ծան. 34). ՎՁԵԲ-ը Բանկում իրականացրել է նոր ավանդների տեղաբաշխում պայմանագրային դրույթների խախտումից հետո 10,000 հազար ԱՄՆ դոլարի չափով, և ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ-ի կողմից՝ 8,000 հազար ԱՄՆ դոլարի և 3,000 հազար եվրոյի չափով :
6. Հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը բոլոր փոխառությունները մարել է համաձայնագրերում սահմանված ժամանակացույցի համաձայն, առանց ուշացումների (ծան. 34):

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ հիմնական միջոցների և ֆինանսական գործիքների :

Բանկն իր գործարքներն իրականացնում է հետևյալ փոխարժեքներով՝

	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31
Փակման փոխարժեք – [ՀՀ դրամ]		
1 ԱՄՆ դոլար	483.75	484.10
1 Եվրո	553.65	580.10

Նույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ներկայացման և հաշվարկի մեթոդները կիրառվել են ինչպես 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում, այնպես էլ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ, բացառությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության և հետևյալ նոր և բարեփոխված Ստանդարտների մեկնաբանությունների ընդունման ազդեցության `

ՖՀՄՍ 9	*Ֆինանսական գործիքներ*
ՖՀՄՍ 15	*Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ*
ՖՀՄՍ փոփոխություններ	*ՖՀՄՍ-ների 2014-2016 թթ. տարեկան բարելավումների ցիկլ*
ՖՀՄՄԿ 22	*Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ*

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ընթացիկ տարում գործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը. Ընթացիկ տարում Բանկը կիրառել է ՖՀՄՍ 9. *Ֆինանսական գործիքներ* ստանդարտը (վերանայված 2014 թ. հուլիսին) և այլ ՖՀՄՍ ստանդարտների համապատասխան հետագա փոփոխությունները, որոնք գործում են 2018 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 9-ի անցումային դրույթները Բանկին թույլատրում են չիրականացնել համեմատականների վերահաշվարկ: Համապատասխան տեղեկատվության մասով վերահաշվարկ չի իրականացվել, քանի որ անցումային դրույթները կիրառվում են հետադարձ հիմունքներով, ինչը հնարավորություն է տալիս տարբերությունները ճանաչել չբաշխված շահույթում ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Ինչպես նաև, Բանկն ընդունել է ՖՀՄՍ 7 *Ֆինանսական գործիքներ – Բացահայտումներ* ստանդարտի փոփոխությունները, որոնք կիրառվել են 2018 թ. բացահայտումների մասով:

ՖՀՄՍ 9 ներկայացնում է նոր պահանջներ՝

1. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման մասով,
2. Ֆինանսական ակտիվների արժեզրկման մասով, և
3. Հեջավորման ընդհանուր հաշվառման մասով:

Այս նոր պահանջների մանրամասները, ինչպես նաև այդ պահանջների ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված են ստորև:

Զուտ տոկոսային եկամուտ. Բոլոր ֆինանսական գործիքների մասով տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարգևավճարներին կամ զեղչերին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով գործարքի արժեքը ճանաչվում է շահույթում կամ վնասում սկզբնական ճանաչման ժամանակ:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ոչ-վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ, նախքան ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գծով պահուստի մասով ճշգրտումները) կամ ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ (համախառն հաշվեկշռային արժեքը, հանած ԱՎԿ գծով պահուստը):

Գնված կամ ի սկզբանե արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների դեպքում արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվից ստացվելիք ապագա դրամական հոսքերը որոշելիս արտացոլում է ակնկալվող վարկային կորուստները:

Բանկի շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են նաև տոկոսադրույքի ռիսկերի դրամական միջոցների հոսքերի հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության արդյունավետ մասը: Տոկոսադրույքի ռիսկերի իրական արժեքի հեջի դեպքում տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության արդյունավետ մասը, ինչպես նաև հեջավորված հոդվածի նախատեսված ռիսկի իրական արժեքի փոփոխությունները:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր. Վճարները և կոմիսիոն ծախսերը իրենց մեջ ներառում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժան մաս հանդիսացող վճարներից բացի այլ վճարներ (տես վերոնշյալ բաժինը): Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ: Բանկի շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այս մասում ընդգրկված վճարները, ի թիվս այլ վճարների, ներառում են վարկային համաձայնագրի սպասարկման վճարներ, վարկային պարտավորությունների գծով չօգտագործման վճարներ, երբ քիչ հավանական է, որ այդ վճարները կառաջացնեն հատուկ վարկային պարտավորություններ և վարկային սինդիկացիոն վճարներ:

Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվառվում են այդ ծառայությունների մատուցումից հետո:

Զուտ օգուտ/(վնաս) առևտրային նպատակներով պահվող ակտիվներից և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներից և առևտրային նպատակներով պահվող պարտավորություններից. Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներից և առևտրային նպատակներով պահվող պարտավորություններից զուտ օգուտը/(վնասը) ներառում են առևտրային նպատակներով պահվող ակտիվներից և պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից առաջացած բոլոր օգուտները և վնասները:

Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից զուտ օգուտը/(վնասը) ներառում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտները և վնասները, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների:

Շահաբաժիններից եկամուտ. Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Ցուցակված բաժնային արժեթղթերի համար կիրառվում է նախորդ շահաբաժնի ամսաթիվը, և սովորաբար այն ամսաթիվը, երբ բաժնետերերը հաստատում են շահաբաժինները ոչ ցուցակված բաժնային արժեթղթերի համար: Սա հանդիսանում նախորդ շահաբաժնի ամսաթիվ ցուցակված բաժնային արժեթղթերի համար, և սովորաբար, այն ամսաթիվը, երբ բաժնետերերը հաստատում են շահաբաժիններ ոչ ցուցակված բաժնային արժեթղթերի համար:

Շահաբաժիններից եկամուտը ներառվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում՝ հիմք ընդունելով բաժնային գործիքների դասակարգումը և չափումը, այսինքն՝

- Առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքների դեպքում՝ շահաբաժիններից եկամուտը ներկայացվում է որպես առևտրային եկամուտ;
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների դեպքում շահաբաժիններից եկամուտը ներկայացվում է այլ եկամուտում, և
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չչափվող և առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքների դեպքում շահաբաժիններից եկամուտը ներկայացվում է որպես զուտ եկամուտ

Ֆինանսական ակտիվներ. Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են առևտրի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի գծով ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների և ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշների կառավարման բիզնես մոդելը:

Մասնավորապես՝

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված

մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

- Բիզնես մոդելում առկա պարտքային գործիքները, որոնց նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով;
- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Այնուամենայնիվ, Բանկն իրականացրել է հետևյալ մշտական հիմունքներով դասակարգումը ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվ-առ-ակտիվ հիմունքով՝

- Բանկը կարող է մշտական հիմունքներով որոշել ներկայացնել բաժնային ներդրումային գործիքների իրական արժեքի հետագա փոփոխությունները, որոնք չեն հանդիսանում վաճառքի համար պահվող, կամ պայմանական վճարում, որը ճանաչվում է ձեռք բերողի կողմից՝ որպես բիզնեսի միավորման մաս, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, և
- Բանկը կարող է մշտական հիմունքներով դասակարգել պարտքային գործիքը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքի կամ այլ համապարփակ ֆինանսական աղյունքի միջոցով իրական արժեքով չափվող չափանիշներին, որը չափվում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, եթե դա վերացնում կամ նշանակալի նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը (իրական արժեքի օպցիոն);

<u>Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող.</u> Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման նպատակով Բանկի բիզնես մոդելը:

Ակտիվի, որը դասակարգվում և չափվում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով, պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանոմ են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI).

SPPI թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ ժամանակի մեջ դրամի արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: SPPI գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական վարկային համաձայնագրին: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական հոսքերի ռիսկերին կամ անկայունությանը ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերվում հիմնական վարկային համաձայնագրին, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ այն բանից, արդյոք այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելների գնահատումը իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Բանկը որոշում է բիզնես մոդելների այնպիսի մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար: Բանկի բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի

մասով ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը:

Բանկն ունի մի քանի բիզնես մոդելներ ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Բանկի՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Բանկի բիզնես մոդելները որոշում են, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելը գնահատելիս Բանկը դիտարկում է հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Բանկը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Բանկը հաշվի է առնում հետևյալ հասանելի ողջ տեղեկատվությունը՝

- Ինչպես է գնահատվում և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացվում բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների գործունեության արդյունքները
- Այն ռիսկերը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների) գործունեության արդյունքների վրա, և մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մոդելները; և
- Ինչպես են բիզնես կառավարիչները վարձատրություն ստանում (արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքի, թե հավաքագրված պայմանագրային դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը որոշում է, արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը: Բանկը վերագնահատում է իր բիզնես մոդելները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում, որոշելու համար, արդյոք բիզնես մոդելները փոփոխության են ենթարկվել նախորդ ժամանակաշրջանից հետո: Ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում Բանկը բիզնես մոդելներում փոփոխություններ չի հայտնաբերել:

Այն դեպքում, երբ պարտքային գործիքը, որը չափվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ապաճանաչվում է, ապա կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում: Եվ, հակառակը, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներդրումային գործիքների կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղաշարժվում է սեփական կապիտալում: Պարտքային գործիքները, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ենթակա են արժեզրկման:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքվ չափվող ֆինանսական ակտիվներ են համարվում՝

- ակտիվները այնպիսի պայմանագրային դրամական հոսքերով, որոնք չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI); կամ/ և
- բիզնես մոդելում առկա ակտիվներ, բացառությամբ այն ակտիվների, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, կամ հավաքագրել և վաճառել այդ ակտիվները; կամ
- շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ, որոնք օգտագործում են իրական արժեքի մեթոդը

Այս ակտիվները չափվում են իրական արժեքով, իսկ այդ վերաչափումից առաջացած օգուտները/վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Վերադասակարգում. Եթե բիզնես մոդելը, որի շրջանակներում Բանկը պահում է ֆինանսական ակտիվներ, փոփոխվում է, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են հեռանկարային հիմունքներով առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, բիզնես մոդելի փոփոխությունից հետո, ինչը հանգեցրել է Բանկի ֆինանսական

ակտիվների վերադասակարգմանը: Ֆինանսական ակտիվների փոփոխության և ապաճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ պայմանավորված պայմանագրային դրամական հոսքերի փոփոխությունները ներկայացված են ստորև:

Արժեզրկում. Բանկը ճանաչում է ԱՎԿ-ների գծով պահուստները հետևյալ ֆինանսական գործիքների մասով, որոնք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չեն չափվում՝

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ;
- Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ;
- Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ;
- Ներդրումային արժեթղթեր;
- Հակադարձ հետգնման պայմանագրեր;
- Այլ ֆինանսական ակտիվներ - առևտրային դեբիտորական պարտքեր;
- Այլ ֆինանսական պարտավորություններ – արտահաշվեկշռային պայմանական դեպքեր և պարտավորություններ
- Տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

Արժեզրկման գծով ոչ մի կորուստ բաժնային ներդրումների մասով չի ճանաչվել:

Բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների, որոնք մանրամասն ներկայացվուն են ստորև, ակնկալվող վարկային կորուստները (ԱՎԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- 12-ամսյա ԱՎԿ-ներ. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի դեֆոլտային իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ամբողջական ԱՎԿ-ներ: ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Դասակարգումը ըստ փուլերի մանրամասն ներկայացվում է ծան. 32-ում:

Ֆինանսական գործիքի մասով ամբողջական ԱՎԿ գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ի չափով:

ԱՎԿ-ները, վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են Խմբի պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որը Բանկը ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

- Չօգտագործված վարկային գծերի դեպքում ԱՎԿ-ն Բանկին վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի տարբերությունն է, որը Բանկին վճարման ենթակա է, եթե տվյալ վարկառուն օգտագործում է տվյալ վարկային գիծը և այն դրամական հոսքերը, որոնք Բանկը ակնկալում է ստանալ վարկային գծի օգտագործման մասից, և;
- Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում ԱՎԿ-ն երաշխավորված պարտքային գործիքի սեփականատիրոջը փոխհատուցելու նպատակով ակնկալվող վճարումների միջև տարբերությունն է, հանած այն գումարը, որը Բանկը ակնկալում է ստանալ պարտապանից կամ այլ կողմից:

Բանկը ԱՎԿ-ն չափում է անհատական հիմունքով, կամ միևնույն տնտեսական ռիսկի հատկանիշներ ունեցող վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով: Կորուստների գծով պահուստների գնահատումը հիմնված է ակտիվների ակնկալվող դրամական հոսքերի ներկա արժեքի վրա՝ կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, անկախ այն բանից, արդյոք այն չափվել է անհատական, թե հավաքական հիմունքով:

Վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը «վարկային տեսանկյունից արժեզրկվում է» այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա կանխիկ դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Վարկային տեսանկյունից

արժեզրկված ֆինանսական ակտիվները համարվում են փուլ 3-ի ակտիվներ: Վարկային տեսանկյունից արժեզրկման վկայությունը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկել տվյալները՝

- Փոխառուի կամ թողարկողի զգալի ֆինանսական դժվարությունները;
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես ուշացումը կամ չկատարումը.
- Վարկատուն վարկառուի՝ տնտեսական կամ պայմանագրային պատճառների արդյունքում առաջացած ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում վերանայում է վարկավորման պայմանները, որը հակառակ դեպքում չէր դիտարկի;
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը; կամ
- Մեծ զեղչով ֆինանսական ակտիվների ձեռքբերումը, որն արտացոլում է տեղի ունեցած վարկային կորուստները:

Երբեմն անհնար է առանձնացնել մեկ իրադարձություն, քանի որ մի քանի իրադարձությունների միասնական ազդեցությունն է հանգեցնել ֆինանսական ակտիվների արժեզրկմանը: Բանկը գնահատում է, արդյոք պարտքային գործիքները, որոնք հանդիսանում են ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, համարվում են արժեզրկված յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնահատելու համար, արդյոք պետական և կորպորատիվ պարտքային գործիքները արժեզրկված են, Բանկը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են պարտատոմսերի եկամտաբերությունը, վարկունակության ցուցանիշը, և վարկառուի կողմից միջոցների ներգրավման կարողությունը:

Վարկը համարվում է արժեզրկված այն ժամանակ, երբ Բանկը զիջումներ է կատարում վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, եթե առկա չեն վկայություններ այն մասին, որ զիջումների արդյունքում զգալի նվազել են պայմանագրային դրամական միջոցների չստացման հավանականության ռիսկերը և չկան արժեզրկման այլ ցուցանիշներ: Այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով նախատեսված են զիջումներ, սակայն տրամադրված չեն, համարվում են արժեզրկված, երբ առկա է դիտարկելի ապացույցներ արժեզրկման վերաբերյալ, ներառյալ դեֆոլտի սահմանման պահանջներին համապատասխանությունը: Դեֆոլտի սահմանումը (տես ստորև) ներառում է վճարունակության անհավանական լինելը, ինչպես նաև գումարների 90 օր կամ ավել ժամկետանց լինելու հավանականությունը:

Գնված կամ ի սկզբանե արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվներ. Գնված կամ ի սկզբանե արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվները տարբեր դիտարկվում են, քանի որ ակտիվը արժեզրկվում է սկզբնական ճանաչման ժամանակ: Այս ակտիվների դեպքում Բանկը ճանաչում է սկզբնական ճանաչումից ի վեր ամբողջական ԱՎԿ-ի բոլոր փոփոխությունները որպես կորուստների գծով պահուստ, իսկ յուրաքանչյուր հետագա փոփոխություն՝ շահույթում կամ վնասում: Այս ակտիվների մասով բարենպաստ փոփոխությունները առաջացնում են արժեզրկումից օգուտ:

Դեֆոլտի սահմանումը. ԱՎԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՎԿ-ի չափը և կորուստների գծով պահուստները 12-ամսյա կամ գործունեության ողջ ընթացքի գծով ԱՎԿ-ի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը դեֆոլտի հնարավորության (ԴՀ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՎԿ-ի գնահատման, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Բանկը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է դեֆոլտ, երբ

- փոխառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած նյութական վարկային պարտավորություն Բանկի նկատմամբ, կամ

Դեֆոլտի սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով: Օվերդրաֆտները համարվում են ժամկետանց, եթե հաճախորդը խախտել է վճարման ժամկետները կամ կատարել է վճարման ենթակա գումարից պակաս վճարում:

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկատվությունը: Գնահատված տեղեկատվությունը կախված է ակտիվի տեսակից, օր.՝ կորպորատիվ վարկավորման դեպքում որակական գործոն է հանդիսանում պայմանագրային դրույթների խախտումը, ինչը չի կիրառվում անհատական վարկավորման ժամանակ: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն վարկառուի այլ պարտավորությունների

չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում: Դեֆոլտը գնահատելիս Բանկը հաշվի է առնում տեղեկատվության տարբեր աղբյուրներ՝ ներքին կամ արտաքին:

Վարկային ռիսկի նշանակալի աճ. Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները, վարկային պարտավորությունները և ֆինանսական երաշխավորության պայմանագրերը դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի հնարավոր աճը գնահատելու նպատակով: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով վարկային գործողության ողջ ընթացքի համար հաշվարկվող ԱՎԿ-ի, այլ ոչ 12-ամսյա ԱՎԿ-ի վրա:

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Բանկը համեմատում է հետևյալը. ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմնված գործիքի գծով մարման մնացորդային պարտավորության վրա, և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի ռիսկը, որն ակնկալվում էր մնացորդային պարտավորության մարման գծով՝ գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ և հիմնավորված են, ներառյալ փորձը և կանխատեսումները՝ առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի, հիմնվելով Բանկի փորձի և վարկերի փորձագիտական գնահատման վրա, այդ թվում՝ կանխատեսումների:

Սկզբնական ճանաչման ժամանակ և հետագա հաշվետու ամսաթվերին ԴՀ որոշման հիմք են ձևավորում բազմաթիվ տնտեսական սցենարներ: Տարբեր տնտեսական սցենարներ կառաջացնեն դեֆոլտի տարբեր հավանականություն: Այս տարբեր սցենարների կշիռը ձևավորում է դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմք, որն օգտագործվում է վարկային ռիսկի նշանակալի աճը որոշելիս:

Կորպորատիվ վարկավորման դեպքում, կանխատեսումները ներառում են այն ոլորտների ապագա հեռանկարները, որտեղ գործում են Բանկի պարտապանները. տեղեկություններ, ստացված տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից, ինչպես նաև փաստացի և կանխատեսական տնտեսական տեղեկությունների ներքին և արտաքին տարբեր աղբյուրներ: Անհատական վարկավորման դեպքում, կանխատեսումները ներառում են կորպորատիվ վարկավորման դեպքում կիրառվող տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումներ, ինչպես նաև տեղական տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները, մասնավորապես, շրջանների պարագայում՝ տնտեսության որոշ ոլորտների կենտրոնացումը, ինչպես նաև հաճախորդների վարկունակության վերաբերյալ ներքին տեղեկություններ: Բանկը իր գործընկերներին դասակարգում է՝ ըստ համապատասխան ներքին վարկային ռիսկի աստիճանի՝ հիմք ընդունելով իրենց վարկային որակը: Քանակական տեղեկատվությունը հանդիսանում է վարկային ռիսկի զգալի աճի կարևորագույն ցուցանիշ, որը հիմնված է վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող ԴՀ-ի փոփոխությամբ՝ համեմատելով՝

- Վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- Վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն այն ժամանակահատվածի համար, երբ այն գնահատվել է՝ հիմք ընդունելով ռիսկերի սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերը և հանգամանքները

Օգտագործվող ԴՀ-ները հանդիսանում են պայմանական գնահատումներ և Բանկն օգտագործում է ԱՎԿ գծով պահուստների գնահատման ժամանակ կիրառված նույն մեթոդաբանությունը և տվյալները:

Այն որակական գործոնները, որոնք արտացոլում են վարկայի ռիսկի նշանակալի աճ, ԴՀ մոդելներում ներկայացվում են ժամանակին: Այնուամենայնիվ, Բանկը դեռևս առանձին է դիտարկում որոշ որակական գործոններ վարկային ռիսկի նշանակալի աճը գնահատելիս: Կորպորատիվ վարկավորման դեպքում, «դիտարկումների ցանկում» ներառված ակտիվներին յուրահատուկ ուշադրություն է դարձվում այն դեպքում, երբ առկա է որոշակի վարկառուի վարկարժանության վատթարացման կասկած և ռիսկը ներառված է «դիտարկումների ցանկում»: Անհատական վարկավորման դեպքում Բանկը հաշվի է առնում վարկային պայմանների վերանայման ակնկալիքները, վարկանիշները և այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են գործազրկությունը, սնանկացումը, բաժանումը կամ մահը:

Հաշվի առնելով, որ սկզբնական ճանաչումից հետո վարկային ռիսկի զգալի աճը հարաբերական չափորոշիչ է, դեֆոլտի հավանականության (ԴՀ) տվյալ փոփոխությունը առավել նշանակալից կլինի ֆինանսական գործիքի համար ավելի ցածր սկզբնական դեֆոլտի հավանականությամբ, քան համեմատած դեֆոլտի բարձր հավանականություն ունեցող ֆինանսական գործիքի հետ:

Ի հավելումն, երբ ակտիվը դառնում է ավելի, քան 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործունեության ողջ ընթացքի ԱՎԿ-ով:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և ժամկետայնության միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում: Ի լրումն, ընթացիկ վարկային պայմանագրի առկա դրույթների կիրառումը կամ ճշգրտումները կներառեն փոփոխություններ, եթե անգամ այս նոր և ճշգրտված դրույթները առայժմ ազդեցություն չունեն դրամական հոսքերի վրա, բայց կարող են ազդել դրամական հոսքերի վրա, կախված այն բանից, թե արդյոք այդ դրույթներին համապատասխանում են, թե ոչ (օր.՝ դրույթների չկատարման արդյունքում տոկոսադրույքի աճի փոփոխության դեպքում):

Բանկը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկային պայմանագրի պայմանները, որպեսզի ապահովի ստացման ենթակա գումարների առավելագույն հավաքագրումը և նվազագույնի հասցնի դեֆոլտի ռիսկերը: Վարկի պայմանները վերանայվում են այն դեպքում, երբ, չնայած, որ վարկառուն հնարավորինս ամեն ինչ արել է սկզբնական պայմանագրային վճարման պայմանները կատարելու համար, սակայն առկա է վճարումների չկատարման մեծ ռիսկ կամ դա արդեն տեղի է ունեցել, և ակնկալվում է, որ վարկառուն կկարողանա կատարել իր պարտավորությունները վերանայված պայմանների դեպքում: Վերանայված պայմանները հիմնականում ներառում են վարկի մարման ժամկետների երկարաձգում, վարկի դրամական հոսքերի ժամկետների փոփոխություն (մայր գումարի և տոկոսների մարում), վճարման ենթակա գումարների կրճատում (մայր գումարի և տոկոսային գումարների համաներում) և պայմանագրային դրույթների փոփոխություններ: Բանկը սահմանել է վարկային պայմանների վերանայման քաղաքականություն, որը կիրառվում է և կորպորատիվ, և անհատական վարկավորման դեպքում:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Բանկը գնահատում է, արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Բանկի քաղաքականության համաձայն, փոփոխություններն առաջացնում է ապաճանաչում այն ժամանակ, երբ այդ փոփոխությունը հանգեցնում է էապես տարբերվող այլ պայմանագրային պայմանների առաջացմանը: Որոշելու համար, արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Բանկը հաշվի է առնում հետևյալը՝

- Որակական գործոններ, ինչպիսիք են այն պայմանագրային դրամական հոսքերը, որոնք փոփոխությունից հետո չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, ինչպես նաև փոխարժեքի կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների, ժամկետայնության, պայմանագրային դրույթների փոփոխությունը:

Եթե այս գործոնները չեն պարզաբանում էական փոփոխությունները, ապա՝

- Քանակական գնահատում է իրականացվում՝ համեմատելով սկզբնական պայմաններով մնացորդային պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական հոսքերը: Այդ գումարները զեղչվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Բանկը որոշում է, որ առկա է վարկային համաձայնագրի նշանակալի տարբերություն, ինչը հանգեցնում է ապաճանաչման:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ԱՎԿ գծով պահուստները չափվում են ապաճանաչման օրվա դրությամբ՝ ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը այդ օրվա դրությամբ որոշելու նպատակով: Վերանայված հաշվեկշռային արժեքի և նոր պայմաններով նոր ֆինանսական ակտիվի իրական արժեքի միջև տարբերությունը առաջացնում է ապաճանաչման մասով օգուտ կամ վնաս: Նոր ֆինանսական ակտիվը կունենա 12-ամսյա ԱՎԿ-ի հիմունքներով չափվող կորուստների գծով պահուստ, բացառությամբ առանձին դեպքերի, երբ նոր վարկը կհամարվի արժեզրկված առաջացման պահին: Սա կիրառվում է միայն այն դեպքում, երբ նոր վարկի իրական արժեքը ճանաչվում է իր վերանայված անվանական արժեքի նշանակալի զեղչով, քանի որ դեռևս առկա է դեֆոլտի ռիսկը, ինչը փոփոխությունների արդյունքում չի նվազել:

Բանկը վերահսկում է փոփոխված ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը՝ գնահատելով որակական և քանակական տեղեկատվությունը (օր.՝ արդյոք վարկառուն ունի ժամկետանց օրեր նոր պայմանների պարագայում):

Երբ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները փոփոխվում են, ինչը ապաճանաչման չի հանգեցնում, Խումբը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսկան ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, համեմատելով՝

- Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և սկզբնական պայմանագրային պայմաններով գնահատված ամբողջական ԴՀ-ն, և
- Հաշվետու ամսաթվի դրութամբ փոփոխված պայմանագրային պայմաններով ամբողջական ԴՀ-ն:

Ինչ վերաբերում է Բանկի՝ վարկային պայմանների վերանայման քաղաքականության շրջանակներում փոփոխված ֆինանսական ակտիվներին, երբ այդ փոփոխության արդյունքում ապաճանաչում չի առաջացել, ապա ԴՀ-ի գնահատումն արտացոլում է Բանկի կարողությունը հավաքագրել փոփոխված պայմաններով դրամական հոսքերը՝ հիմք ընդունելով Խմբի նախկին փորձը նմանատիպ համաներման գործընթացների պարագայում, ինչպես նաև տարբեր վարքագծային ցուցանիշներ, որոնք են՝ վարկառուի պարտաճանաչ վճարման կարողությունը փոփոխված պայմանագրային պայմաններում: Եթե վարկային ռիսկը շարունակում է մնալ ավելի բարձր, քան ակնկալվում էր սկզբնական ճանաչման ժամանակ, ապա կորուստների գծով պահուստը կրկին չափվելու է ամբողջական ԱՎԿ-ին համարժեք գումարով: Վերանայված պայմաններով վարկերի մասով կորուստների գծով պահուստը հիմնականում կչափվի՝ հիմք ընդունելով 12-ամսյա ԱՎԿ, երբ առկա է վարկառուի վճարունակության բարելավման վկայություն, ինչն առաջացնում է նախկինում վարկային ռիսկի նշանակալի աճի նվազեցում:

Այն դեպքում, երբ փոփոխությունների արդյունքում ապաճանաչում չի առաջանում, Բանկը հաշվարկում է այդ փոփոխությունների օգուտը/վնասը՝ համեմատելով համախառն հաշվեկշռային արժեքը փոփոխությունից առաջ և հետո (բացառությամբ ԱՎԿ գծով պահուստը): Այնուհետև, Բանկը գնահատում է ԱՎԿ-ն փոփոխված ակտիվի մասով, երբ փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացած ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են սկզբնական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների նվազեցման հաշվարկում:

Բանկն ապաճանաչում է ֆինանսկան ակտիվն այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում առաջացած սպառումը) կամ երբ ֆինանսական ակտիվի և վերջինիս սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են երրորդ կողմի: Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների և կուտակված օգուտի/վնասի գումարի տարբերությունը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային ներդրումային գործիքների, որոնք դասակարգվել են որպես այլ համապափակ ֆինանսական արդյունքում իրական արժեքով չափվող, երբ կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Սա չի կիրառվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներգրութմային

գործիքների մասով, քանի որ այլ համապարփակ եկամուտում նախկինում ճանաչված կուտակված օգուտը/վնասը հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Դուրսգրում. Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում այն ժամանակ, երբ Բանկը չունի ֆինանսական ակտիվի վերականգնման (ամբողջական կամ մասնակի) ողջամիտ ակնկալիքներ: Այս դեպքում Բանկը որոշում է, որ վարկառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով բավարար դրամական միջոցներ ստեղծելու համար: Դուրսգրումը ներառում է ապաճանաչման իրադարձություն: Բանկը կարող է դուրս գրված ֆինանսական ակտիվների նկատմամբ հարկադիր միջոցներ կիրառել: Բանկի գործադրած հարկադիր միջոցների արդյունքում հավաքագրված գումարները արժեզրկման գծով օգուտ կառաջացնեն:

ԱՎԿ գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. ԱՎԿ գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում;
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների դեպքում՝ կորուստների գծով ոչ մի պահուստ չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ հաշվեկշռային արժեքը չափվում է իրական արժեքով: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստները ներառվում են ներդրումների գծով վերագնահատման պահուստի վերագնահատման արժեքում
- Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում՝ որպես պահուստ, և
- Այն դեպքում, երբ ֆինանսական գործիքը ներառում է և օգտագործված, և չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարողանում որոշել վարկային գծի բաղադրիչի մասով ԱՎԿ-ն օգտագործված բաղադրիչից առանձին, ապա Բանկը ներկայացնում է կորուստների գծով համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն արժեքից կորուստների գծով պահուստի ցանկացած գերազանցում ներկայացվում է որպես պահուստ:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Խմբի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական վճարից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Խմբի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՖՀՄՍ 9 ստանդարտը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքների զուտ օգուտ/(վնաս)» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մասով, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում, եթե այլ համապարփակ եկամուտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի առաջացնում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Պարտավորության իրական արժեքի փոփոխության մասով մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամուտում ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող տրամադրված վարկային գծերի և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի բոլոր օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Այն դեպքում, երբ Բանկը որոշում է, արդյոք այլ համապարփակ եկամուտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկերի փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն է առաջացրել կամ այդ անհամապատասխանությունը մեծացրել, ապա գնահատում է, արդյոք պարտավորության վարկային ռիսկերի փոփոխության ազդեցությունը հաշվանցվելու է շահույթում կամ վնասում՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ պայմանավորված: Այս որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսը համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է վերոնշյալ «զուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Նմանապես, Բանկը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության

հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ, ապա նախքան փոփոխությունը պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ օգուտներում կամ վնասներում հոդվածում փոփոխության օգուտ կամ վնաս:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Բանկը կնքում է գործարքներ տարբեր ֆինանսական ածանցյալ գործիքներով, որոնցից մի քանիսը պահում է վաճառքի նպատակներով, իսկ մնացածը՝ տոկոսադրույքի, վարկային և արտարժույթային ռիսկերը կառավարելու նպատակով: Ածանցյալ գործիքները ներառում են արտարժույթի ֆորվարդային պայմանագրեր, տոկոսային սվոփեր, արտարժութային-տոկոսային սվոփեր և վարկային դեֆոլտային սվոփեր:

Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով համապատասխան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ և հետագայում վերաչափվում են իրենց իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Դրա արդյունքում առաջացած օգուտը/վնասը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Դրական իրական արժեքով ածանցյալ գործիքները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես ֆինանսական պարտավորություն: Ածանցյալ գործիքը հանդիսանում է ոչ ընթացիկ ակտիվ կամ պարտավորություն, եթե տվյալ գործիքի մարման մնացորդային ժամկետը 12 ամսից ավել է և չի ակնկալվում այդ գործիքի իրացում կամ մարում 12 ամիսների ընթացքում: Այլ ածանցյալ գործիքները հանդիսանում են ընթացիկ ակտիվներ կամ պարտավորություններ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. Ֆինանսական երաշխավորության պայմանագիրն այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով.

- ՖՀՄՍ 9 ստանդարտի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող ֆինանսական երաշխավորության պայմանագրերը ներկայացվում են որպես պահուստներ ֆինանսական վիճակի մասի հաշվետվությունում և դրանց վերաչափումը ներկայացվում է այլ հասույթում:

Բանկը որևէ ֆինանսական երաշխավորության պայմանագիր չի դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում. Շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով.

- ՖՀՄՍ 9 ստանդարտի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման պայմանագրերը, որոնք չեն չափվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով, ներկայացվում են որպես պահուստներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրանց վերաչափումը ներկայացվում է այլ հասույթում: Բանկը շուկայականից ցածչ տոկոսադրույքով տրամադրման

որևէ պայմանագիր չի դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Անցման ազդեցությունը. Ստորև աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման և կատեգորիաների վերանայումը, ինչպես նաև ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9 հաշվեկշռային արժեքների համադրումը վարկերի, արժեթղթերի և արտահաշվեկշռային ռիսկերի մասով 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9 ստանդարտի ընդունման արդյունքում: Այլ ֆինանսական ակտիվների կատեգորիաների և պարտավորությունների չափման հիմունքներում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

	Չափում ըստ ՀՀՄՍ 39	Չափում ըստ ՖՀՄՍ 9	Հաշվեկշռային արժեք՝ ըստ ՀՀՄՍ 39	Վերադասակարգում	Վերաչափում	Հաշվեկշռային արժեք՝ ըստ ՖՀՄՍ 9
Ֆինանսական ակտիվներ						
Ներդրումային արժեթղթեր	Վաճառքի համար մատչելի	Այլ համապ. Ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	21,655,188	-	-	21,655,188
Ներդրումային արժեթղթեր	Մինչև մարման ժամկետը պահվող	Այլ համապ. Ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող	49,618	-	-	49,618
Ընդամենը առևտրային նպատակներով պահվող և ներդրումային արժեթղթեր			**21,704,806**	**-**	**-**	**21,704,806**
Վարկային կորուստների գծով պահուստ			-	-	(166,940)	(166,940)
Պահանջներ բանկերի նկատմամբ	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	13,036,368	-	(148,819)	12,887,549
Կանխիկ միջոցներ և թղթակցային հաշիվներ	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	35,824,831	-	(7,479)	35,817,352
Հաճախորդներին տրվող վարկեր	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	104,216,558	-	(228,176)	103,988,382
Հակադարձ հետգնման պայմանագրեր	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ (առևտրային դեբիտորական պարտքեր)	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկային կորուստների գծով պահուստներ արտահաշվեկշռային ռիսկերի դեպքում			-	-	(103,411)	(103,411)
Ընդամենը ՖՀՄՍ 9 ընդունման ազդեցությունը նախքան հարկումը					**(487,885)**	**(487,885)**

Ընդամենը ՖՀՄՍ 9 ընդունման ազդեցությունը հարկումից հետո	**(390,308)**	**(390,308)**

Ստորև աղյուսակում ներկայացված է ՖՀՄՍ 9-ի ընդունման ազդեցությունը Բանկի սեփական կապիտալի վրա, մասնավորապես՝ ներդրումների մասով վերագնահատման պահուստի և չբաշխված շահույթի վրա, 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ՝

	Ներդրում. վերագնահատման պահուստ	**Չբաշխված շահույթ**
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,531,277**	**4,597,371**
Բիզնես մոդելների գնահատման արդյունքում ֆինանսական ակտիվների վերաչափում, առանց հարկերի	166,940	(557,248)
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,698,217**	**4,040,123**

ՖՀՄՍ 15 Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ. ՖՀՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը այն ժամանակ, երբ ապրանքները կամ ծառայությունները փոխանցվում են հաճախորդին գործարքի արժեքով: Առաջարկվող ապրանքների կամ ծառայությունների տարատեսակ հանդիսացող յուրաքանչյուր փաթեթ պետք է առանձին ճանաչվի, և պայմանագրային գնի համար կիրառվող զեղչերը կամ այլ տեսակի իջեցումները պետք է բաշխվեն առանձին տարրերի միջև: Այն դեպքում, երբ հատուցումները տարբերվում են, ապա նվազագույն գումարները պետք է ճանաչվեն, եթե առկա չեն հակադարձման նշանակալի ռիսկեր: Հաճախորդների հետ պայմանագրերի ապահովման գծով ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ այդ պայմանագրային օգուտները սպառվել են:

ՖՀՄՍ 15-ի ընդունումը, համաձայն իրականացված վերլուծության, նշանակալի ազդեցություն չի ունեցել ընթացիկ տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա:

Ընթացիկ տարում Բանկը կիրառել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՍԽ/IASB) կողմից հրապարակված ՖՀՄՍ և մեկնաբանությունների մի շարք փոփոխություններ, որոնք գործում են 2018 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունների ընդունումը նշանակալի ազդեցություն չի ունեցել սույն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված բացահայտումների և գումարների վրա:

ՖՀՄՄԿ 22. Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ. ՖՀՄՄԿ 22-ը սահմանում է, թե ինչպես պետք է որոշել «գործարքի ամսաթիվը»՝ փոխարժեքը որոշելու նպատակով, որը կօգտագործվի ակտիվի, ծախսի կամ եկամտի սկզբնական ճանաչման ժամանակ, երբ այդ միավորի համար վճարումը նախապես վճարվել է կամ ստացվել է արտարժույթով և հանգեցրել ոչ դրամային ակտիվի կամ պարտավորության ճանաչմանը (օրինակ, չփոխհատուցված ավանդ կամ հետաձգված եկամուտ):

Մեկնաբանությամբ պարզաբանվում է, որ գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ անձը կատարում է կանխավճարի ստացման կամ վճարման արդյունքում առաջացած ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության սկզբնական ճանաչումը: Եթե կանխավճարները կատարվել են կամ ստացվել են բազմակի անգամ, մեկնաբանությամբ պահանջվում է սահմանել յուրաքանչյուր կանխավճարի ստացման կամ վճարման ամսաթիվը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ներկայացման և հաշվարկի մեթոդներ, որոնք կիրառվել են միայն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Խմբի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Ֆինանսական գործիքներ. Բանկը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային պարտավորությունների կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով կամ սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և վարկեր և դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը ճանաչվում և ապաճանաչվում են առքուվաճառքի օրվա դրությամբ: Կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով կամ սահմանված կարգով:

<u>Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ.</u> Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

<u>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.</u> Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը (i) իրենից ներկայացնում է պայմանական վճարում, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից՝ որպես բիզնեսի միավորման մաս, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, (ii) վաճառքի համար պահվող, կամ (iii) սահմանվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում մոտ ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կամ պայմանագրային գումարներից, որոնք կարող են վճարվել ձեռք բերողի կողմից՝ որպես ձեռնարկատիրական միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման

կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի համար վճարած բոլոր տոկոսները և ներառվում են շահույթի ու վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, շահույթի կամ կորստի մասին հաշվետվությունների «այլ օգուտներ և վնասներ» հոդվածում: Իրական արժեքը որոշվում է ներկայացված եղանակով (տես ծան. 30):

<u>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.</u> մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Խումբն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Բանկը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը, ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Բանկին կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու ֆինանսական տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

<u>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ.</u> Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Բանկի կողմից պահվող հետգնվող ցուցակված պարտատոմսերը, որոնք գնվում և վաճառվում են ակտիվ շուկայում, դասկարգվում են որպես վաճառքի համար մատչելի և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով: Բանկը նաև ներդրումներ ունի չցուցակված բաժնետոմսերում, որոնք չեն վաճառվում ակտիվ շուկայում, սակայն նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով (քանի որ ղեկավարությունը կարծում է, որ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել): Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես՝ ծան. 30): Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները, որոնք վերաբերում են արտարժույթի փոխարժեքի փոփոխություններին, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ հաշվարկված տոկոսային եկամուտը և վաճառքի համար մատչելի բաժնային գործիքներից ստացված շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում ներդրումների վերագնահատման պահուստ հոդվածում: Երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է արժեզրկված, ներդրումների վերագնահատման պահուստի հոդվածում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ գործող սփոթ փոխարժեքով: Շահույթում կամ վնասում ճանաչված՝ արտարժույթի փոխարժեքից օգուտները և վնասները որոշվում են դրամային ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա: Արտարժույթի փոխարժեքից այլ օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Վաճառքի համար մատչելի սեփական կապիտալում ներդրումները, որոնք չունեն ակտիվ շուկայում գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, չափվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջում:

<u>Վարկեր և դեբիտորական պարտքեր.</u> Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված

չեն ակտիվ շուկայում (ներառյալ ՀՀ ԿԲ մնացորդները, բանկերից ստացման ենթակա գումարները, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ), դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխատվության գործարքներ. Իր գործունեության բնականոն ընթացքում Բանկն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման պայմանագրեր (հետգնման), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման): Բանկն օգտագործում է հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրն իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետգնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ՝ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Հակադարձ ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվները գրանցվում են ֆինանսական հաշվետվություններում որպես արժեթղթերով գրավադրված ավանդի կանխիկ դրամական միջոցներ և այլ ակտիվներ, և դասակարգվում են բանկից ստանալիք և/կամ հաճախորդներին տրված վարկեր:

Բանկը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները ՀՀ-ում եվ ԱՊՀ տարածքում: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններում, գրավի առարկան ստացողն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել այն, որը ենթակա է համարժեք արժեթղթերի վերադարձման գործարքի մարման ժամանակ:

Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխանցվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. Ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ ցուցակված կամ չցուցակված կապիտալի ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումն իր ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները՝

- թողարկողի կամ գործընկերոջ զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Խմբի նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում, ինչպես նաև ազգային, կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված շուկայում համանման ֆինանսական ակտիվի եկամտաբերության դրույքաչափով: Նման արժեզրկումից կորուստը ենթակա չէ հակադարձման հաջորդ ժամանակաշրջաններում:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ վարկը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ եկամուտում ճանաչված կուտակված օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար, այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի առումով արժեզրկման կորուստները, նախկինում ճանաչված շահույթում կամ վնասում, չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Արժեզրկման կորուստից հետո առաջացած իրական արժեքի աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում ներդրումների վերագնահատման պահուստում:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի առումով արժեզրկման կորուստները հակադարձվում են շահույթի կամ վնասի միջոցով այն դեպքում, երբ ներդրման իրական արժեքի աճը կարելի է օբյեկտիվորեն կապել արժեզրկման կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած որևէ իրադարձության հետ:

<u>Վերանայված վարկեր.</u> Հնարավորության դեպքում Բանկը փորձում է վերակառուցել վարկերը՝ գրավի նկատմամբ իրավունք ստանալու փոխարեն: Սա կարող է ներառել նաև վճարման հետաձգում և նոր պայմաններով վարկի համաձայնեցում: Այն դեպքում, երբ պայմանագրային պայմանները վերանայվում են, ապա ցանկացած արժեզրկում չափվում է՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված նախքան պայմանների փոփոխությունը: Այս դեպքում վարկը այլևս չի համարվում ժանկետանց: Ղեկավարությունը վերահսկում է վերանայված պայմաններով վարկերը՝ բոլոր չափանիշներին համապատասխանությունը և ապագա վճարումների հավանականությունը ապահովելու համար: Վարկերը, որոնք արժեզրկման տեսանկյունից գնահատվում են անհատական կամ խմբային հիմունքներով, հաշվառվում են վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

<u>Վարկերի և կանխավճարների դուրսգրում.</u> Վարկերի և կանխավճարների արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը և կանխավճարները դուրս են գրվում ղեկավարության կողմից գումարների հավաքագրման

ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և Բանկի կողմից գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը. Բանկը որոշ ոչ-ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք չեն հանդիսանում առևտրային նպատակով պահվող և կազմում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կատեգորիայի մաս, վերադասակարգել է որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: 2009 թ. հուլիսի 1-ից Բանկին թույլատրվել է, որոշ հանգամանքներում, վերադասակարգել ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք չեն հանդիսանում առևտրային նպատակով պահվող, դասակարգել «վաճառքի համար մատչելի», «վարկեր և դեբիտորական պարտքեր» կամ «մինչև մարման ժամկետը պահվող» կատեգորիաներում: Նույն ամսաթվից սկսած Բանկին թույլատրվել է նաև, որոշ հանգամանքներում, վերադասակարգել ֆինանսական գործիքները, որոնք չեն հանդիսանում վաճառքի համար մատչելի, վերադասակարգել «վարկեր և դեբիտորական պարտքեր» կատեգորայիում: Վերահաշվարկները կատարվում են իրական արժեքով վերադասակարգման ամսաթվի դրությամբ, որը դառնում է նոր ամորտիզացված արժեք: Վերադասակարգումը կատարվում է ղեկավարության հայեցողությամբ գործիք-առ-գործիք սկզբունքով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Բանկը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում: Եթե Խումբը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Խումբը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Սա չի կիրառվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներգրուԹմային գործիքների մասով, քանի որ այլ համապարփակ եկամուտում նախկինում ճանաչված կուտակված օգուտը/վնասը հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ և թողարկված բաժնային գործիքներ

Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը. Պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային պարտավորությունների էությունից և ֆինանսական պարտավորության կամ բաժնային գործիքի սահմանումից:

Բաժնային գործիքներ.Բաժնային գործիքը ցանկացած այն պայմանագիրն է, որը վկայում է կազմակերպության ակտիվում ունեցած բաժնեմասնակցության մասը՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները ճանաչվում են որպես մուտքեր՝ հանած թողարկման ուղղակի ծախսերը:

Բանկի սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում և ուղղակիորեն նվազեցվում սեփական կապիտալից: Բանկի սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի,

թողարկման կամ դադարեցման արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները չեն ճանաչվում շահույթում կամ վնասում:

Բաղադրյալ գործիքներ

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը (i) իրենից ներկայացնում է պայմանական վճարում, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից՝ որպես բիզնեսի միավորման մաս, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, (ii) վաճառքի համար պահվող, կամ (iii) դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Խմբի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական վճարից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Խմբի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես ծան. 30):

Այլ ֆինանսական պարտավորություններ. Այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ՝ ԿԲ-ում դեպոզիտորական գործիքները, բանկերի և հաճախորդների ավանդները, վերագնման պայմանագրերը, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառնված միջոցները, սուբորդինացված պարտքը և այլ ֆինանսական պարտավորությունները) սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի

հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. ֆինանսական երաշխավորության պայմանագիրն այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով.

- ՀՀՄՍ 37. *Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ* ստանդարտի համաձայն որոշված պայմանագրով նախատեսված պարտավորության գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, ներկայացման և հաշվարկի մեթոդներ, որոնք կիրառվել են ընթացիկ տարում և Բանկի 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Գործառնական արժույթ. ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Բանկն իրականացում է իր գործունեությունը («գործառութային արժույթ»): Բանկի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում. ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության մեջ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ֆորվարդ և ֆյուչերս. Ֆորվարդային և ֆյուչերսային պայմանագրերը երկու կողմերի միջև կնքվող համաձայնագրեր են ապագայում որոշակի արժեքով և ամսաթվին որոշակի ֆինանսական գործիքի գնման կամ վաճառքի նպատակով: Ֆորվարդային պայմանագրերը կնքվում են արտաբորսայական շուկայում: Ֆյուչերսային պայմանագրերը կնքվում են կարգավոչվող բորսայում ստանդարտացված արժեքով և ենթակա են դրամական մարժայի պահանջներին օրական կտրվածքով: Ֆորվարդային և ֆյուչերսային պայմանագրերի հիմնական տարբերությունը ռիկերի առումով հանդիսանում են վարկային ռիկսը և իրացվելիության ռիսկը:

Բանկը ենթակա է վարկային ռիկսի ֆորվարդային պայմանագրերի կողմերի մասով: Ֆյուչերսային պայմանագրերի մասով վարկային ռիսկը համարվում է մինիմալ, քանի որ բորսայի կողմից սահմանված դրամական մարժայի պահանջները ապահովում են այդ պայմանագրերի կատարումը: Ֆորվադային պայմանագրերը հաշվարկվում են համախառն արժեքի հիմունքով և, հետևաբար, հանդիսանում են իրավելիության ավելի բարձր ռիսկ ունեցող, քան ֆյուչերսային պայմանագրերը, որոնք հաշվարկվում են զուտ արժեքի հիմունքով: Պայմանագրերի երկու տեսակներին էլ բնորոշ են շուկայական ռիսկերը:

Սվոփեր. Սվոփերը երկու կողմերի միջև կնքվող համաձայնագրեր են որոշակի ժամանակահատվածում պայմանական արժեքով սահմանված վճարումների փոխանակման մասին, որոնք վերաբերվում են որոշակի ինդեքսների (տոկոսային, արտարժութային և բաժնային) շարժին:

Տոկոսդրույքի սվոփերը վերաբերում են այլ ֆինանսական կազմակերպությունների հետ Բանկի կողմից կնքված պայմանագրերին, ըստ որի Բանկը ստանում կամ վճարում է լողացող տոկոսադրույք ի պատասխան ֆիքսված տոկոսադրույքի համապատասխան վճարման կամ ստացման: Վճարումների հոսքերը սովորաբար զտվում են, և դրա արդյունքում առաջացած տարբերությունը մի կողմը վճարում է մյուս կողմին:

Արտարժութային սվոփերում Բանկը վճարում է սահմանված գումար՝ արտահայտված մեկ արժույթով և ստանում է սահմանված գումար այլ արժույթով: Արժութային սվոփերը հիմնականում հաշվարկվում են համախառն արժեքի հիմունքով:

Օպցիոններ. Օպցիոնային պայմանագրերը սահմանում են իրավունք, այլ ոչ պարտավորություն, գնորդի համար գնել կամ վաճառել որոշակի գումարի ֆինանսական գործիք պայմանագրում սահմանված գնով, ամսաթվին կամ որոշակի ժամանակահատվածում: Բանկը գնում կամ վաճառում է օպցիոններ կարգավորվող բորսայի միջոցով և արտաբորսայական շուկայում:

Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով համապատասխան պայմանգրերի ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ և հետագայում վերաչափվում են իրենց իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Այդ գործիքների օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում անմիջապես:

Վարձակալություն. Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանասական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության բոլոր ռիկսերը և օգուտները փոխանցվում են վարձակալին: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական:

Բանկը որպես վարձակալ. Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Բանկի ակտիվներ իրենց իրական արժեքով վարձակալության սկզբի դրությամբ, կամ ավելի ցածր լինելու դեպքում՝ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով: Վարձատուի նկատմամբ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալական վճարները համամասնորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցման միջև՝ պարտավորության մնացորդի մասով կայուն տոկոսադրույք ստանալու նպատակով: Ֆինանսական ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, այն պայմանով, որ դրանք ուղղակիորեն վերագրելի չեն qualifying ակտիվներին: Այդ դեպքում ֆինանսական ծախսերը կապիտալացվում են փոխառության ծախսումների մասով Բանկի քաղաքականություն համաձայն: Պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալական պայմանագրի կնքման խրախուսող պայմանները ճանաչվում են որպես պարտավորություն:

Խրախուսող պայմանների ամբողջական օգուտը ճանաչվում է որպես վարձավճարների գծով ծախսերի նվազեցում գծային մեթոդով, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք զերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Առգրավված ակտիվներ

Որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ

Արտադրական, ապրանքների կամ ծառայությունների մատակարարման կամ վարչական նպատակներով պահվող հողերը և շինությունները հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրենց վերագնահատված արժեքով, որը հանդիսանում է իրական արժեք վերագահատման ամսաթվի դրությամբ, հանած հետագա կուտակված մաշվածություն և կուտակված արժեզրկման կորուստներ:

Վերագնահատումը իրականացվում է բավարար հաճախականությամբ, երբ հաշվեկշռային արժեքները էապես չեն տարբերվում այն հաշվեկշռային արժեքներից, որոնք կորոշվեն՝ օգտագործելով իրական արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Այսպիսի հողերի և շինությունները վերագնահատման արդյունքում առաջացած յուրաքանչյուր վերագնահատման աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի հողերի և շենքերի վերագնահատման արդյունքում առաջացած վերագնահատման աճը կուտակվում է սեփական կապիտալում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված նույն ակտիվի վերագահատման նվազումը, և այս դեպքում աճը կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում նախկինում ծախսագրված մասից նվազման չափով:

Այսպիսի հողերի և շենքերի վերագնահատման արդյունքում առաջացած հաշվեկշռային արժեքի նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում միայն այն մասով, որը գերազանցում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստում պահվող մնացորդը, որը վերաբերում է տվյալ ակտիվի նախորդ վերագնահատմանը:

Վերագնահատված շենքերի մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատված հիմնական միջոցի հետագա վաճառքի կամ շրջանառությունից դուրսբերման ժամանակ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում մնացած վերագրելի վերագնահատման հավելաճը փոխանցվում է միանգամից չբաշխված շահույթ:

Այլ տնտեսական գույքը հաշվարկվում է սկզբնական արժեքով հանած կուտակային մաշվածությունը և կուտակային արժեզրկման կորուստները:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը՝ դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, իսկ գնահատման մեջ յուրաքանչյուր փոփոխություն հաշվարկվում է հեռանկարային հիմունքներով: Մաշվածությունը հաշվարկվում է հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

	Օգտակար ծառայություն (տարիներ)
Շենքեր	50
Համակարգիչներ	3-5
Տրանսպորտային միջոցներ	8
Վարձակալված ակտիվների բարելավումներ	20
Այլ ակտիվներ	8

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները մաշվում են իրենց ակնկալվող օգտակար ծառության ժամկետի ընթացքում այն նույն հիմունքով, ինչպես և սեփական ակտիվները: Սակայն, եթե առկա չէ խելամիտ համոզվածություն առ այն, որ վարձակալության ժամկետի ավարտին սեփականության իրավունք կընձեռնվի այդ ակտիվների նկատմամբ, ապա

ակտիվները մաշվում են նվազագույնը վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետի:

Հիմնական միջոցների տարրն ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ. որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում. ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս, կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից. յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար, արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչ հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ, քան հաշվեկշռային արժեքը, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի

հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Թանկարժեք մետաղներ

Թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ընթացիկ փոխարժեքով՝ հիմնված Լոնդոնի թանկարժեք մետաղների բորսայի փոխարժեքների վրա, օգտագործելով տվյալ օրվա դրությամբ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ/կորուստ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսն իրենից ներկայացնում է ընթացիկ հարկի գծով պարտավորության և հետաձգված հարկի հանրագումարը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը նախքան հարկումը տարբերվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորություններն, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Ինչպես նաև, հետաձգված հարկային պարտավորություններըչեն ճանաչվում, եթե գուդվիլի սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում է ժամանակավոր տարբերություն :

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, ինչը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ընթացիկ կամ հետաձգված հարկն առաջանում է բիզնեսի միավորման նախնական հաշվապահական

հաշվառումից, հարկային ազդեցությունը ներառվում է բիզնեսի միավորման նախնական հաշվապահական հաշվառման մեջ:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ երրորդ կողմ ամբողջությամբ, կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Խնդրահարույց պայմանագրեր. Խնդրահարույց պայմանագրերով պայմանավորված ներկա պարտավորությունները ճանաչվում և չափվում են որպես պահուստներ: Պայմանագիրը համարվում է խնդրահարույց այն ժամանակ, երբ պարտավորությունների կատարման համար անխուսափելի ծախսերը գերազանցում են այդ պայմանագրով պայմանավորված ակնկալվող տնտեսական օգուտները:

Վերանայում. Վերանայման գծով պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Բանկը մշակում է վերանայման մանրամասն պլան և արդեն սահմանել է իրական ակնկալիքներ այն կողմերի գծով, ում դա վերաբերվում է, և իրականացնելու է վերանայում՝ սկսելով իրականացնել պլանը կամ ներկայացնելով այն կողմերին, ում դա վերաբերվում է: Վերանայված վարկերի պահուստը ներառում է վերանայման արդյունքում առաջացած ուղղակի ծախսերը, որոնք անհրաժեշտ են վերանայման համար և չեն վերաբերվում կազմակերպության բնականոն գործունեությանը:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ. պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Ֆիդուցիար գործունեություն. Բանկը իր հաճախորդներին մատուցում է հավատարմագրային ծառայություններ: Նա նաև մատուցում է դեպոզիտար ծառայություններ իր հաճախորդներին, որն իր մեջ ներառում է գործարքներ իրենց ավանդային հաշիվների արժեթղթերով: Ֆիդուցիար գործունեության արդյունքում ընդունված ակտիվները և առաջացած պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը ստանձնում է այս գործունեության արդյունքում առաջացած գործառնական ռիսկեր, իսկ Բանկի հաճախորդները ստանձնում են վարկային և շուկայական ռիսկերը այս գործունեության մասով: Հավատարմագրային ծատայությունների մատուցումից առաջացած հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ համապատասխան ծառայությունը մատուցվում է:

Արժեթղթավորման գործարքներ

Գրավ. Բանկը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Բանկին վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Սեփական կապիտալի պահուստներ

Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սեփական կապիտալում ճանաչված պահուստները (այլ համապարփակ ֆինանսական արդյունք) բաղկացած են՝

- Ներդրումներ վերագնահատման պահուստից, որը ներառում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսկան ակտիվների իրական աժեքի փոփոխությունները;
- Հիմնական միջոցների վերագնահատման պահուստից, որը ներառում է հողի և շինությունների վերագնահատման պահուստը:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Բանկը չի կիրառել հետևյալ հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները:

Ստորև ներկայացված նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը կրում է զուտ ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն այս նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարեն համապատասխան բացահայտումներ:

ՖՀՄՍ 16	*Վարձակալություն*
ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլ	*Փոփոխություններ ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, ՖՀՄՍ 11 Համատեղ պայմանավորվածություններ, ՀՀՄՍ 12 Շահութահարկեր և ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ ստանդարտներում*
Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդատներում	*Էականության սահմանումը*
ՖՀՄՄԿ 23	*Շահութահարկի մոտեցումների անորոշություն*

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս ստանդարտների ընդունումը զգալի ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակահատվածների համար, բացառությամբ ներքոնշյալի՝

ՖՀՄՍ 16 Վարձակալություն

<u>ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի կիրառման ընդհանուր ազդեցությունը.</u> ՖՀՄՍ 16-ում ներկայացվում է վարձակալական ձեռնարկումների և հաշվապահական մոտեցումների սահմանման համապարփակ մոդել՝ նախատեսված վարձակալի և վարձատուի համար: ՖՀՄՍ 16-ը կփոխարինի վարձակալության վերաբերյալ գործող ուղեցույցը, ներառյալ ՀՀՄՍ 17-ի «Վարձակալություն» ստանդարտը և առնչվող մեկնաբանությունները 2019 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանների համար: Բանկն այս ստանդարտն առաջին անգամ կկիրառի 2019 թ. հունվարի 1-ից:

Ի հակադրություն վարձակալության հաշվապահական հաշվառման, ՖՀՄՍ 16-ը զգալի կերպով խթանում է ՀՀՄՍ 17 ստանդարտի՝ վարձակալի հաշվապահական հաշվառման պահանջները:

<u>Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը.</u> Բանկը կօգտագործի ՖՀՄՍ 16-ին անցում կատարելու դեպքում հնարավորությունը և չի վերագնահատի, արդյոք պայմանագիրը հանդիսանում է կամ ներառում է վարձակալություն: Հետևաբար, վարձակալության սահմանումը, ՀՀՄՍ 17 և ՀՖՄՄԿ 4 ստանդարտների համաձայն, շարունակելու է կիրառվել այն վարձակալությունների մասով, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել նախքան 2019 թ. հունվարի 1:

Վարձակալության սահմանման մեջ փոփոխությունը վերաբերում է հիմնականում վերահսկողությանը: ՖՀՄՍ 16-ը տարբերակում է վարձակալական և ծառայությունների մատուցման պայմանագրերը այն մասով, արդյոք որոշակի ակտիվի օգտագործումը վերահսկվում է հաճախորդի կողմից: Վերահսկողություն գոյություն ունի, եթե հաճախորդն ունի՝

- Որոշակի ակտիվի օգտագործումից ստացված բոլոր տնտեսական օգուտների ձեռքբերման իրավունքը; և
- Տվյալի ակտիվի օգտագործումը տնօրինելու իրավունք:

Բանկը կկիրառի վարձակալության սահմանումը և համապատասխան ուղեցույցը բոլոր այն վարձակալական պայմանագրերի նկատմամբ, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել 2019 թ.

հունվարի 1-ին կամ դրանից հետո (վարձակալության պայմանագրում և վարձատուի, և վարձակալի պարագայում):

Ազդեցությունը վարձակալի հաշվապահական հաշվառման վրա

Գործառնական վարձակալություն. ՖՀՄՍ 16 ստանդարտը փոխում է Բանկի կողմից վարձակալության հաշվառման կարգը, որը նախկինում դասակարգվել է որպես գործառնական վարձակալություն, համաձայն ՀՀՄՍ 17 ստանդարտի, և համարվել արտահաշվեկշռային:

ՖՀՄՍ 16 սկզբնական կիրառման դեպքում Բանկը բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ ներքոնշյալի)՝

(ա) Ճանաչելու է օգտագործման իրավունքով ակտիվները և վարձակալության պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որը սկզբնապես չափվել է ապագա վարձակալության վճարումների ներկա արժեքի հիման վրա,
(բ) Ճանաչելու է օգտագործման իրավունքով ակտիվների մաշվածությունը և վարձակալության պարտավորությունների գծով տոկոսները համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում,
(գ) Տարանջատելու է վճարված դրամական միջոցների ընդհանուր գումարը ըստ մայր գումարի (ներկայացված ֆինանսական գործունեությունում) և տոկոսի (ներկայացված գործառնական գործունեությունում) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Վարձակալական պայմանագրի կնքման խրախուսող պայմանները (առանց վարձավճարի օգտագործման ժամանակահատված) ճանաչվելու են որպես օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալության պարտավորությունների չափման մաս, այնինչ ՀՀՄՍ 17-ի համաձայն, դրանք հանգեցրել են պայմանագրային պարտավորության խրախուսող պայմանների ճանաչմանը, ամորտիզացված որպես վարձավճարի գծով ծախսերի նվազեցում՝ հիմնվելով գծային մեթոդի վրա:

ՖՀՄՍ 16-ի համաձայն, օգտագործման իրավունքով ակտիվները ստուգվելու են արժեզրկման առկայության համար, ըստ ՀՀՄՍ 36 Ակտիվների արժեզրկում ստանդարտի: Սա փոխարինելու է նախկին պահանջը խնդրահարույց վարձակալության պայմանագրերի պահուստի ճանաչման մասով:

Կարճաժամկետ վարձակալության (12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալություն) և փոքրարժեք ակտիվների վարձակալության (օր.՝ անձնական համակարգիչներ և գրասենյակային կահույք) մասով Խումբը կճանաչի վարձակալության գծով ծախսերը՝ հիմնվելով գծային մեթոդի վրա, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 16 ստանդարտով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղարկման ոչ ենթակա գործառնական վարձակալությամբ Բանկի պարտավորությունները կազմում են 2,873,951 հազար դրամ:

Բանկը պլանավորում է կիրառել ՖՀՄՍ 16 ստանդարտը առաջին անգամ 2019 թ. հունվարի 1-ին՝ հետադարձ հիմունքներով: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ի ընդունման կուտակային ազդեցությունը ճանաչվելու է որպես չբաշխված շահույթի մնացորդների ճշգրտումներ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, առանց համեմատական տեղեկատվության վերահաշվարկի:

Բանկը մտադրություն ունի չկիրառել վարձակալության սահմանման պահանջները ՖՀՄՍ 16-ին անցում կատարելու ժամանակ: Հետևաբար, վարձակալության սահմանումը, ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ 4 ստանդարտների համաձայն, շարունակվելու է կիրառվել այն վարձակալությունների մասով, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել նախքան 2019 թ. հունվարի 1:

ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլ. Փոփոխություններ ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, ՖՀՄՍ 11 Համատեղ պայմանավորվածություններ, ՀՀՄՍ 12 Շահութահարկեր և ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ ստանդարտներում:

ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլով փոփոխություններ են կատարվում չորս ստանդարտներում:

ՀՀՄՍ 12 Շահութահարկեր. ՀՀՄՍ 12-ի փոփոխություններով հստակեցվում է, որ կազմակերպությունը պարտավոր է ճանաչել շահաբաժինների գծով եկամտահարկի հետևանքները շահույթում կամ վնասում, այլ համապարփակ եկամուտում կամ սեփական կապիտալում, կախված այն բանից, թե որտեղ է կազմակերպությունը սկզբնապես ճանաչել շահույթի տեղաբաշխմանը հանգեցնող գործարքները: Այս պայմանը կիրառվում է անկախ այն

բանից, արդյոք կիրառվում են տարբեր հարկերի դրույքաչափեր տեղաբաշխված և չտեղաբաշխված շահույթի նկատմամբ:

ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ. ՀՀՄՍ 23-ի փոփոխություններով հստակեցվում է, որ եթե փոխառությունը մնում է չմարված մինչև համապատասխան ակտիվի նպատակային օգտագործումը կամ վաճառքը, ապա այդ պարտավորությունը դառնում է կազմակերպության փոխառությամբ վերցրած միջոցների մասը, երբ հաշվարկվում է ընդհանուր փոխառությունների կապիտալացման տոկոսադրույքը:

ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ. ՖՀՄՍ ստանդարտ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ երբ կազմակերպությունը ձեռք է բերում իրենից համատեղ գործունեություն ներկայացնող բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը, նա կիրառում է ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման ժամական կիրառվող պահանջները, ներառյալ այդ բիզնեսում նախկինում վաճառքի համար պահվող տոկոսների վերաչափումը իրական արժեքով: Վերաչափման ենթակա նախկինում վաճառքի համար պահվող տոկոսները ներառում են համատեղ գործունեությանը վերաբերող յուրաքանչյուր չճանաչված ակտիվ, պարտավորություն և գուդվիլ:

ՖՀՄՍ 11 Համատեղ պայմանավորվածություններ. ՖՀՄՍ 11-ում կատարված փոփոխությամբ հստակեցվում է, որ երբ կազմակերպությունը ձեռք է բերում համատեղ գործունեություն (սակայն չունի համատեղ վերահսկողություն) ներկայացնող բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը, նա չի վերագնահատում այդ բիզնեսում նախկինում վաճառքի համար պահվող տոկոսները:

Բոլոր փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան տարեկան ժամանակաշրջանների համար և հիմնականում կիրառվում է հեռանկարային հիմունքներով: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Բանկի ղեկավարարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը ապագայում նշանակալի ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Կարևոր հաշվապահական գնահատումներ և հաշվապահական հաշվառման քաղաքականությունների կիրառման գնահատման դատողություններ

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունների դատողություններ

Բիզնես մոդելի գնահատումը. Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը հիմնված են SPPI թեստի և բիզնես մոդելի թեստի արդյունքների վրա: Բանկը որոշում է բիզնես մոդելի այնպիսի մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրագործման համար: Այս գնահատումը ներառում է դատողություններ, որոնք արտացոլում են համապատասխան վկայություններ այն մասին, թե ինչպես է գնահատվում և չափվում ակտիվների գործունեությունը, ակտիվների գործունեության վրա նշանակալի ազդեցություն ունեցող ռիսկերը, դրանց կառավարման ձևերը, և, ինչպես են փոխհատուցվում ակտիվների կառավարիչները: Բանկը վերահսկում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որոնք ապաճանաչվել են նախքան մարման ժամկետի ավարտը, դրանց օտարման պատճառը հասկանալու նպատակով և արդյոք այդ պատճառները համապատասխանում են այն բիզնես նպատակներին, որոնց համար այդ ակտիվները պահվել են: Մոնիթորիգը հանդիսանում է Խմբի շարունակական գնահատման գործընթացի մաս, որի օգնությամբ որոշվում է, արդյոք բիզնես մոդելը, որի համար պահվել են մնացյալ ֆինանսական ակտիվները, շարունակում է լինել համապատասխան և, հակառակ դեպքում, արդյոք տեղի են ունեցել փոփոխություններ բիզնես մոդելում, և, համապատասխանաբար, նաև փոփոխություններ հետագայում այդ ակտիվների դասակարգման մասով:

Վարկային ռիսկի նշանակալի աճ. Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2-ում, ԱՎԿ-ները չափվում են որպես պահուստներ՝ համարժեք փուլ 1-ում գտնվող ակտիվների մասով 12-ամսյա ԱՎԿ-ներին կամ փուլ 2 կամ 3-ում գտնվող ակտիվների ամբողջական ԱՎԿ-ներին: Ակտիվը տեղափոխվում է փուլ 2, եթե ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր: ՖՀՄՍ 9 չի սահմանում, թե ինչն է համարվում վարկային ռիսկի զգալի աճ: Ակտիվի զգալի աճի գնահատման նպատակով Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ և հիմնավորված են: Մանրամասները ներկայացված են ծան. 32-ում:

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսեր: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի՝ Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդը, որը ստեղծված է համաձայն կանոնակարգային պահանջների՝ բանկի ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական դեպքերի համար:

2018 թ. թողարկված արտոնյալ բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրը 15,000 դրամ անվանական արժեքով, իրավունք ունեն ստանալ 14% արտոնյալ շահաբաժիններ նախքան սովորական բաժնետոմսերի բաժնետերերին շահաբաժիններ հայտարարելը: Արտոնյալ բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք:

2018 և 2017 թթ. Բանկը հայտարարել է 277,880 հազար ՀՀ դրամի շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի մասով (2017 թ.՝ 370,507 հազար ՀՀ դրամ) և 232,438 հազար ՀՀ դրամի շահաբաժիններ՝ արտոնյալ բաժնետոմսերի մասով:

Համաձայն Խորհրդի No 3 որոշման, առ 16 նոյեմբեր, 2018 թ., Բանկն իրականացրել է ներքին տեղաշարժեր (չբաշխված շահույթի և այլ պահուստների կապիտալացում) Էմիսիոն եկամուտից 33,438 հազար դրամի չափով, գլխավոր պահուստից՝ 3,000,000 հազար դրամի չափով և չբաշխված շահույթից՝ 2,524,160 հազար դրամի չափով դեպի բաժնետիրական կապիտալ (հղում՝ 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն):

28. Ներդրումների վերագնահատման պահուստ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով ներդրումների վերագնահատման պահուստը ներառում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների *վերագնահատումից առաջացած կուտակված օգուտներ* և վնասներ, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հանած շահույթում կամ վնասում վերադասակարգված գումարներ, երբ այդ ակտիվները օտարվել են կամ ենթակա են արժեզրկման:

	2018 թ.	2017 թ.
Տարեսկզբի դրությամբ	**1,531,277**	**1,251,977**
ՖՀՄՍ 9-ի ընդունում	166,940	-
Վերահաշվարկված	**1,698,217**	**1,251,977**
Վերագնահատումից զուտ օգուտ	368,625	912,045
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման մասով վերադասակարգման ճշգրտումներ	(633,683)	(563,536)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներին վերաբերող շահութահարկ	49,249	(69,209)
Տարվա զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերականգնումից	18,811	-
Տարեվերջի դրությամբ	**1,501,220**	**1,531,277**

29. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգմանն անմիջապես նախորդող 3 օրացուցային տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Վարկային պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին արտահաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ հաճախորդների կարիքները բավարարելու համար: Նշված ֆինանսական գործիքները ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ և չեն արտացոլվում հաշվեկշռում:

Այս պայմանագրային պարտավորությունների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների անվանական կամ պայմանագրային գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված վարկային գծեր	17,900,458	6,013,484
Երաշխիքներ	3,599,016	2,144,644
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ	**21,499,474**	**8,158,128**

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. Բանկը որպես վարձակալ

Բանկն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով: Չեղարկման ոչ ենթակա գործառնական վարձակալություններով նախատեսված հետագա նվազագույն վարձակալության վճարների ընդհանուր գումարը հետևյալն է.

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Մինչև 1 տարի	663,159	400,438
1-5 տարի	2,177,613	2,245,170
Ավելի քան 5 տարի	33,179	-
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**2,873,951**	**2,645,608**

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային, համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005 թ.-ից Բանկը հանդիսանում է ավանդների հատուցումը երաշխավորող պարտադիր համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 10,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (մինչև 5,000 հազար ՀՀ դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետկանչման դեպքում:

30. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

ՖՀՄՍ-ի սահմանմամբ, իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս:

Բանկը չափում է ֆինանսական գործիքների իրական արժեքը ներկայացված ֆինանսական վիճակի հաշվետվությունում, օգտագործելով հետևյալ իրական արժեքի աստիճանակարգը, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1. Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված) ակտիվ շուկայում
- Մակարդակ 2. Գնահատման մեթոդներ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օր., ինչպես գները) կամ անուղղակի ձևով (օր., գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3. Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս

մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

30.1 Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը՝ չափված իրական արժեքով շարունակական հիմունքով

Բանկի ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից մի քանիսը չափվում են իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և ելակետային տվյալները).

30. Ֆինանսական գործիքների իրական արժեքը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ/ պարտավորություններ	Իրական արժեքը 2018 թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ	Իրական արժեքը 2017 թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
1) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ածանցյալ ֆինանսական ակտիվներ/(պարտավորություններ) (տես ծան. 14)	17,468	(7,706)	Մակարդակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույքաչափերը՝ զեղչված տարբեր գործընկերների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ	կ/չ
2) Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր – պետական պարտատոմսեր (տես ծան. 18)	18,627,928	21,200,791	Մակարդակ 2	Չեղչված դրամական հոսքե Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
3) Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր – ոչ պետական պարտատոմսեր (տես ծան. 18)	1,034,529	414,930	Մակարդակ 2	Չեղչված դրամական հոսքե Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ

4) Այլ համապարփակ ֆին.արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր – բաժնային ներդրումներ (տես ծան. 18)	89,769	89,085	Մակարդակ 3	Բաժնային գործիքների գնահատման համար բացակայում է ակտիվ շուկան, և ոչ մի գնահատման մեթոդ չի կարող կիրառվել՝ դիտարկելի ելակետային տվյալների բացակայությամբ պայմանավորված:	Երկարաժամկետ հասույթի աճի դրույքաչափ, կապիտալի միջին կշռված արժեք, ապագա գործառնական դրամական հոսքեր, գնանշված շուկայական արժեք, շուկայի համեմատականներ շուկայահանման բացակայության պայմաններում և համանման ոլորտներում ցուցակված կազմակերպությունների բաժնետոմսի արժեք	Որքան բարձր է հասույթի աճի դրույքաչափը, այնքան ավելի բարձր է իրական արժեքը Որքան մեծ է կապիտալը միջին կշռված արժեքը, այնքան ավելի ցածր է իրական արժեքը Որքան բարձր են ապագա գործառնական դրամական հոսքերը, այնքան ավելի բարձր է իրական արժեքը

30. Ֆինանսական գործիքների իրական արժեքը (շարունակություն)

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքի» սկզբունքով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար, ինչպես նաև այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Անհրաժեշտ է տրամաբանորեն մեկնաբանել շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հանրապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, որտեղ տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս: Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոխանցումներ մակարդակ 1-ից 2:

Ակնկալվող դրամական հոսքերի զեղչման նպատակով օգտագործված տոկոսադրույքները հիմնված են պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ, գումարած գործիքի արժույթը, ժամկետայնությունը և գործընկերոջ վարկային ռիսկը հետևյալ կերպ՝

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ներդրումային արժեթղթեր	8.2%-17.0%	12.2%-26.1%

30.1 Շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք (սակայն պահանջում է իրական արժեքով բացահայտում)

Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված են գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների դեպքում զեղչվելով ընթացիկ տոկոսադրույքներից: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Ակտիվ շուկայում չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով ավանդների և այլ փոխառությունների գնահատված իրական արժեքը հիմնված է դրանց զեղչված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով համանման մարման ժամկետներով նոր պարտքերի գծով զեղչված տոկոսադրույքները: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

	2018 թ. դեկտեմբերի 31		2017 թ. դեկտեմբերի 31	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Հաճախորդներին տրված վարկեր	133,629,775	136,837,816	104,216,558	110,890,599
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(95,828,768)	(95,054,600)	(91,703,898)	(91,400,093)
Այլ փոխառու միջոցներ	(64,200,798)	(63,054,857)	(39,531,118)	(40,919,190)
Ստորադաս փոխառություն	(3,382,149)	(3,701,500)	(6,409,601)	(7,405,773)
Թողարկված պարտքային արժեթղթեր	(2,060,960)	(2,054,185)	(1,068,764)	(1,068,764)

31 Կապիտալի ռիսկի կառավարում

Բանկը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Բանկի կապիտալի կառուցվածքը բաղկացած է պարտքից և բաժնետիրական կապիտալը տնօրինողներին բաշխման ենթակա սեփական կապիտալից, որն իրենից ներկայացնում է թողարկված կապիտալը, պահուստները և չբաշխված շահույթը, ինչպես բացահայտված է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Բանկի կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Բանկը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Բանկն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահութաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև պարտքի թողարկման միջոցով: Ի լրում, Բանկը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկը Բանկի համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, Բանկը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովի 30,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2017 թ. դեկտեմբերի 31-ին՝ 30,000,000 հազար ՀՀ դրամ), իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 12% (2017 թ. դեկտեմբերի 31-ին՝ 12%):

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Բանկի կանոնակարգային կապիտալի հարաբերակցությունը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքների:

	2018 թ. դեկտեմբերի 31 աուդիտ չարված	**2017 թ. դեկտեմբերի 31 աուդիտ չարված**
Հիմնական կապիտալ	26,735,335	22,419,472
Լրացուցիչ կապիտալ	6,758,956	9,851,109
Ընդհանուր կապիտալ	**33,494,291**	**32,270,581**
Ռիսկով կշռված ակտիվներ	**217,367,488**	**183,231,749**
Ընդհանուր կապիտալը՝ ռիսկով կշռված ակտիվներում տոկոսային արտահայտությամբ (ընդհանուր կապիտալի հարաբերակցություն)	**15.41%**	**17.61%**
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի և ընդհանուր կապիտալի պահանջներին	**Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել**	**Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ առնչվող վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման, և հաշվի առնելով ցանկացած ընդունելի ապահովվածությունը և երաշխիքները: Համանման մոտեցում է ձևավորված նաև չճանաչված պայմանագրային պարտավորությունների գծով՝ որոշակի ճշգրտումներ կատարելով հնարավոր կորուստների պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Կանոնակարգային կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կանոնակարգային կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որն ընդգրկում է վերագնահատման պահուստները:

32 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, որը ենթադրում է ռիսկայնության աստիճանների որոշակի համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է,

ընդ որում գործառնական ռիսկերը գործունեության ընթացքում անխուսափելի են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության՝ ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության միջոցով՝ նվազագույնի հասցնելով Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել, բացահայտել, գնահատել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն արտացոլելու և առկա լավագույն փորձին համապատասխանեցնելու համար:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկման պատասխանատու մարմիններն են.

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժութային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկերի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման մեթոդով հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար: Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և ռիսկերին վերաբերող այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկերի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը, կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի համակենտրոնացումներ

Ռիսկի համակենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք փոխառուներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը ծավալվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ փոխառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա: Համակենտրոնացումների բարձր մակարդակից խուսափելու նպատակով Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ ուղղված դիվերսիֆիկացված պորտֆելի պահպանմանը: Վարկային ռիսկերի բացահայտված համակենտրոնացումները վերահսկվում և կառավարվում են համապատասխան կերպով:

Բանկային գործունեությանը հիմնականում բնորոշ են հետևյալ ռիսկերը՝

- Վարկային ռիսկեր;
- Իրացվելության ռիսկ;
- Շուկայական ռիսկ:

ա. Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտատիրոջ կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը կարող է Բանկին կորուստներ պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և հսկողությունը իրականացվում է Բանկի ՌՌԿՎ և վարկային ստորաբաժանման կողմից, որի վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Բանկի Ռիսկերի կառավարման վարչության կողմից: Ռիսկերի կառավարման վարչությունը կարևոր դերակատարում ունի վարկային ռիսկերի կառավարման և վերահսկման հարցում: Վարչությունը պատասխանատու է վարկային ռիսկերի բացահայտման և գնահատման, ինչպես նաև վերահսկման և մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար: Ռիսկերի կառավարման վարչությունը անմիջականորեն մասնակցում է վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներին և ներքին կանոնակարգերի և վարկային ծրագրերի քննարկմանը: Ինչպես նաև, վարչությունը տրամադրում է անկախ ??? վարկային ռիկսերի նվազեցման միջոցառումների վերաբերյալ, վերահսկում և մոնիտորինգ է իրականացնում վարկային ռիսկերը, տրամադրում է համապատասխան հաշվետվություն ղեկավարությանը և ապահովում է վարկային գործընթացի համապատասխանությունը արտաքին կարգուկանոններին և ներքին պահանջներին և ընթացակարգերին: Բանկը սահմանում է իր կողմից ընդունված վարկային ռիսկերի մակարդակ՝ կիրառելով սահմանաչափեր մեկ վարկառուի/կոնտրագենտի կամ վարկառուների խմբի կամ ոլորտի որոշակի հատվածի մասով: Ոլորտի որոշակի հատվածի մասով կիրառվող վարկային ռիսկի համակենտրոնցման մակարդակի սահմանափակումները հաստատվում և վերահսկվում են ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (այսուհետ՝ ԱՊԿԿ) կողմից: Վարկային ծրագրերի մասով (Փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) և անհատներին տրվող վարկեր) կիրառվող վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Խորհրդի կողմից: Մեկ վարկառուի մասով վարկային ռիսկերի չափը հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար վերհսկվում են վարկային կոմիտեների և ԱՊԿԿ-ի կողմից: Փաստացի ռիսկերի և դրանց սահմանաչափերի միջև համեմատությունը ենթարկվում է մոնիտորինգի օրական կտրվածքով:

Ըստ անհրաժեշտության, և վարկերի մեծամասնության դեպքում, Բանկը ձեռք է բերում գրավ, ինչպես նաև կորպորատիվ և անհատական մակարդակի երաշխիքներ:

Վարկային ռիսկը արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում սահմանվում է որպես գործընկերոջ կողմից պայմանագրային ժամկետների և պայմանների պահպանման անկարողության հետևանքով կորուստների հավանականություն: Ինչ վերաբերում է վարկ տրամադրելու պարտավորությունների գծով վարկային ռիսկին, Բանկը ենթարկվում է վնաս կրելու ռիսկի՝ ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափով: Սակայն, հավանական վնասի չափն ավելի պակաս է, քան ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափը, քանի որ վարկավորման պարտավորությունների ստանձնումը պայմանավորված է հաճախորդների կողմից վարկավորման որոշակի չափանիշներին պահպանմամբ: Բանկը իրականացնում է արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների մոնիտորինգ, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները, ընդհանուր առմամբ, պարունակում են ավելի մեծ վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Մոնիտորիգ

Վարկերի մորիտորիգի համար ներքին կանոնակարգերը կիրառվում են բոլոր վարկերի նկատմամբ, բացառությամբ ոսկու գրավով ապահովված վարկերի, սպառողական վարկերի և իրացվելի ակտիվներով ապահովված վարկերի: Ներքին կանոնակարգերի նպատակն է կառավարել վարկային ռիսկը: Մոնիտորիգն իրկանացվում է մոնիտորինգի բաժնի կողմից: Կիրառվում է մոնիտորինգի երկու տեսակ՝

- Հեռախոսային մոնիտորիգ;
- Մասնաճյուղեր փաստացի այցելությունների միջոցով մոնիտորինգ;

Մոնիտորինգի հաճախականությունը և տեսակները կախված են վարկի կամ օվերդրաֆտի մնացորդից և դրա ռիսկերից՝

- 15 մլն դրամ կամ պակաս վարկային մնացորդի դեպքում մոնիտորինգն իրականացվում է եռամսյակային կտրվածքով, ընտրանքային մեթոդով, դիտարկելով 15 մլն դրամ կամ պակաս մնացորդով վարկերի 5% և կիրառելով մոնիտորիգի երկու տեսակներն էլ;
- 15-ից 40 մլն դրամ վարկային մնացորդի դեպքում մոնիտորիգն իրակացվում է կիսամյակային կտրվածքով մասնաճյուղեր փաստացի այցելությունների միջոցով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է նաև հեռախոսային մոնիտորիգ;
- 40 մլն դրամից ավելի վարկային մնացորդի դեպքում մոնիտորիգն իրականացվում է հետևյալ կերպ՝
    - Մոնիտորինգ դիտարկումների միջոցով տարին երեք անգամ և համապատասխան հաշվետվության պատրաստում սահմանված ձևաչափով;
    - Փաստացի այցելությունների միջոցով մոնիտորիգ տարեկան կտրվածքով և համապատասխան հաշվետվության պատրաստում սահմանված ձևաչափով :

Ի հավելումն վերոնշյալ մոնիտորիգի հաճախականությունների՝

- 15 մլն դրամ կամ ավել մնացորդով վարկերը՝ դասակարգված համաձայն ՀՀ ԿԲ դասակարգման պահանջների, մոնիտորնիգի են ենթարկվում ոչ ուշ, քան դասակարգվելուց հետո հաջորդող ամսվա 15-րդ օրը և պատրաստվում է համապատասխան հաշվետվություն ըստ սահմանված ձևաչափի;
- 40 մլն դրամ կամ ավել մնացորդով վարկերը մոնիտորիգի են ենթակվում փաստացի այցելությունների միջոցով, եթե առկա են 6 անգամ 20 օր կամ ավել ժամկետանց վճարումներ:

Բանկի ֆինանսական հաշվետվությունների հաշվեկշռային արժեքները լավագույնս արտացոլում են վարկային ռիսկերին Բանկի առավելագույն ենթարկվածությունը՝ անկախ գրավի կամ վարկի ապահովվածության այլ միջոցների տեսակից:

Վարկային ռիսկի առավելագույն չափը. Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է թե՛ անհատական ռիսկերից, թե՛ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:
Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին, նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

	2018 թ. դեկտեմբերի 31	**2017 թ . դեկտեմբերի 31 (վերահաշվ.)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,158,045	35,824,831
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,175,950	13,030,610
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,882,703	4,296,862
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	17,468	-
Հաճախորդներին տրված վարկեր	133,629,775	104,216,558
Ներդրումային արժեթղթեր	19,752,226	21,704,806
Այլ ֆին. ակտիվներ	129,380	134,253
	208,745,547	**179,207,920**

Բանկի վարկային ռիսկի գնահատման վերլուծությունում հաշվանցման ազդեցությունը էական չէ: Բանկն ունի վարկերի դիմաց ապահովվածության նպատակով հաճախորդներից ստացված անշարժ գույքի, ակտիվների գծով այլ արժեթղթերի, երաշխիքների տեսքով ստացված գրավներ: Դրանց արժեքների գնահատականը հիմնված է փոխառության պահին գնահատված գրավի արժեքի հիման վրա, և որպես կանոն չեն վերանայվում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկն առանձին վերցրած համարվում է արժեզրկված: Վարկային ռիսկի գծով ստացված գրավները քննարկվում ստորև այս ծանոթագրությունում:

Որպես կանոն, գրավ չի պահվում ածանցյալ ֆինանսական գործիքներով առկա հայցերի, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառությունների գործառնությունների մաս:

Վարկային ռիսկի առավելագույն չափի համակենտրոնացումը

Բանկը համակարգում է իր ստանձնած վարկային ռիսկի մակարդակը, սահմանափակելով մեկ փոխառուի կամ վարկառուների խմբերի հաշվով ստանձնած ռիսկի գումարը, ինչպես նաև արդյունաբերության ճյուղերը (և աշխարհագրական հատվածները): Վարկային ռիսկի սահմանափակումները վարկառուի և վարկավորման տեսակի (ըստ ոլորտի, ըստ տարածաշրջանի) հաստատվում և վերանայվում են վարչության կողմից: Փաստացի ռիսկերի և դրանց սահմանաչափերի միջև համեմատությունը ենթարկվում է մոնիտորինգի օրական կտրվածքով:

Ըստ անհրաժեշտության, և վարկերի մեծամասնության դեպքում, Բանկը ձեռք է բերում գրավ, ինչպես նաև կորպորատիվ և անհատական մակարդակի երաշխիքներ: Սակայն, վարկերի մի տարատեսակ է ֆիզիկական անձանց վարկավորումը, որտեղ նման գործիքները հնարավոր չէ կիրառել: Նման ռիսկերը վերահսկվում են շարունակական հիմունքներով և ենթակա է տարեկան

կամ ավելի հաճախակի վերանայման:

Վարկը տրամադրելու պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկի չօգտագործված մասը վարկերի, երաշխիքների կամ ակրեդիտիվների տեսքով: Վարկային ռիսկը արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում սահմանվում է որպես գործընկերոջ կողմից պայմանագրային ժամկետների և պայմանների պահպանման անկարողության հետևանքով կորուստների հավանականություն: Ինչ վերաբերում է վարկ տրամադրելու պարտավորությունների գծով վարկային ռիսկին, Բանկը ենթարկվում է վնաս կրելու ռիսկի՝ ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափով: Սակայն, հավանական վնասի չափն ավելի պակաս է քան ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափը, քանի որ վարկավորման պարտավորությունների ստանձնումը պայմանավորված է հաճախորդների կողմից վարկավորման որոշակի չափանիշներին պահպանմամբ: Բանկը պայմանական պարտավորությունների նկատմամբ կիրառում է նույն վարկային քաղաքականությունը, ինչ որ հաշվեկշռային ֆինանսական գործիքների նկատմամբ, այսինքն՝ վարկի տրամադրման ընթացակարգերի պահպանում՝ կիրառելով ռիսկի մեղմման սահմանաչափեր և ընթացիկ մոնիտորինգի միջոցառումներ: Բանկը իրականացնում է արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների մոնիտորինգ, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները, ընդհանուր առմամբ, պարունակում են ավելի մեծ վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ:

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 1,907,172 հազար ՀՀ դրամ և 3,568,988 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Աշխարհագրական համակենտրոնացում

Բանկի ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետու-թյուն	**Ոչ ՏՀՀԿ երկրներ**	**ՏՀՀԿ երկրներ**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,483,934	1,897,024	777,087	**38,158,045**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,758,103	1,917,106	500,741	**13,175,950**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	17,468	-	-	**17,468**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,882,703	-	-	**3,882,703**
Հաճախորդներին տրված վարկեր	133,520,756	32,141	76,878	**133,629,775**
Ներդրումային արժեթղթեր	19,746,428	-	5,798	**19,752,226**
Այլ ֆինանսական ակտիվներ	128,207	-	1,173	**129,380**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**203,537,599**	**3,846,271**	**1,361,677**	**208,745,547**

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,273,763	427,141	123,927	**35,824,831**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,013,480	-	17,130	**13,030,610**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	**4,296,862**
Հաճախորդներին տրված վարկեր	104,216,558	-	-	**104,216,558**
Ներդրումային արժեթղթեր	21,704,806			**21,704,806**
Այլ ֆինանսական ակտիվներ	134,253	-	-	**134,253**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**178,639,722**	**427,141**	**141,057**	**179,207,920**

Բանկի համար վարկային ռիսկ գոյացնող գործընկերները չունեն արտաքին վարկանշում: Բանկն օգտագործում է ներքին գործընթացներ և քաղաքականություն՝ գործընկերների վարկանշման և համապատասխան ռիսկի «ախորժակը» որոշելու համար:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի, ներառյալ ֆինանսական կազմակերպությունների գծով վարկային ռիսկի չափը, նա և սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև առևտրային գործարքների, օրինակ՝ արտարժութային ֆորվարդի պայմանագրերի, օրական սահմանաչափերով: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու իրական սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկի ենթարկվելը նաև կառավարվում է վարկառուների և հնարավոր վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծությունների և, անհրաժեշտության դեպքում, վարկի տրամադրման սահմանաչափերի փոփոխման միջոցով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և մեղմիչ մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեղթղթեր
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գրավների տեսակները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Գրավի նախնական գնահատումը տեղի է ունենում վարկային հաստատման գործընթացի ընթացքում, երբ Բանկը հավաքում է տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս կատարել հիմնավորված գնահատում: Գրավի առարկայի արժեքը այն գնահատված գումարն է, որով այն կարող է վաճառվել է գնահատման ամսաթիվը՝ ճշգրտված արժեքի նվազեցմամբ: Արժեքի նվազեցմամբ չափվում է այն ռիսկը, որ Բանկը չի կարողանա վաճառել գրավի առարկան ակնկալվող շուկայական արժեքին հավասար գնով: Անշարժ գույքի և հիմնական միջոցների համար նման նվազեցումը սովորաբար տատանվում է շուկայական արժեքի 20%-ից 40%-ի միջակայքում: Ղեկավարությունն իրականացնում է գրավի շուկայական արժեքների մոնիտորինգ և պահանջում ապահովման հավելյալ միջոց՝ հիմնական համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև հետևում է ստացված ապահովման միջոցների շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվ.)**
Վարկերի ապահովվածություն՝		
Անշարժ գույքի գրավով	52,110,663	41,318,815
Երաշխիքով	40,268,615	30,914,066
Ոսկու գրավով	9,417,962	8,302,797
Փոխադրամիջոցներով (մեքենաներով)	1,660,810	1,383,903
Կանխիկով	556,889	1,097,010
Նյութերով	1,181,078	657,784
Սարքավորումներով	1,663,811	613,011
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներով	7,029	3,889
Այլ արժեթղթերով	287,512	360,799
Այլ գրավով	15,780,613	8,474,644
Չապահովված վարկերով	12,203,221	12,694,960
	135,138,203	**105,821,678**
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(1,508,428)	(1,605,120)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	**133,629,775**	**104,216,558**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ, որ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում, մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

Վարկերին առնչվող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը: Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Վարկի երկարաձգման պարտավորությունների գծով վարկային ռիսկի առկայության դեպքում Բանկի հնարավոր կորուստները կկազմեն ընդամենը չօգտագործված վարկային գծերին համարժեք գումար:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ

երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանություն կիրառելի մինչև 2018 թ. հունվարի 1

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Արժեզրկման գնահատումը Բանկը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման գծով պահուստի անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափն անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման գծով պահուստի խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ վարկային քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին: Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա:

Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և որպես անհատապես արժեզրված վարկ բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները և վերականգնումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Բանկն իրականացնում է բազմաթիվ գործարքներ, որոնց պայմանագրային կողմերը չեն վարկանշված միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից: Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Բանկի ներքին վարկանիշների համաձայն:

Բանկի կողմից մշակվել է վարկառուների վարկանշման մեթոդաբանություն՝ կորպորատիվ վարկառուների վարկանիշերը գնահատելու նպատակով: Այս մեթոդը թույլ է տալիս հաշվարկել և շնորհել/հաստատել վարկառուի վարկանիշը և վարկի դիմաց գրավի վարկանիշը: Համակարգը հիմնված է սքորինգային մոդելի վրա՝ պայմանավորված փոխառուի հիմնական կատարողական ցուցանիշներով, որոշված ուղենիշների անբավարար օբյեկտիվության դեպքում աննշան փորձագիտական ճշգրտումների հնարավորությամբ: Այս մեթոդը ապահովում է վարկանիշի շնորհում հետևյալ չափանիշների խմբերի հիման վրա. փոխառուի շուկայական ցուցանիշները, գուդվիլը, վարկային պատմությունը, տեղեկատվության թափանցիկությունը և վստահելիությունը, բիզնեսի և գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը, Բանկի և վարկառուի հարաբերությունները, վարկառուի ֆինանսական վիճակը, ձեռնարկատիրական գործունեությունը և տրամադրված գրավը: Ֆինանսական վիճակը և ձեռնարկատիրական գործունեությունը ամենակարևոր չափանիշներն են: Հետևաբար, սքորինգի մոդելը նախատեսում է վարկառուի և վարկի ընդհանուր գնահատման մոտեցում:

Վարկառուի սքորինգային գնահատման մոդելը մշակվել է Բանկի կողմից՝ փոքր և միջին բիզնեսի վարկերի գնահատման և որոշումների կայացման նպատակով: Սքորինգային մոդելը մշակվել է ստանդարտ վարկատեսակների համար և ներառում է վարկառուների հիմնական

ցուցանիշները, ինչպիսիք են՝ ֆինանսական վիճակը, վարկառուի հետ հարաբերությունները, կառավարման որակը, նպատակային օգտագործումը, գտնվելու վայրը, վարկային պատմությունը, գրավը, և այլն:
Վարկառուի չափորոշիչների վրա հիմնված սքորինգային գնահատումը վարկավորման որոշումների կայացման գործընթացի հիմնական գործոններից մեկն է:

Անհատ վարկառուների գնահատման մեթոդաբանությունը հիմնված է հետևյալ չափանիշների վրա՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, ֆինանսական վիճակը, վարկային պատմությունը, վարկառուին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Ձեռք բերված տեղեկությունների հիման վրա հաշվարկվում է վարկի առավելագույն սահմանաչափը: Վարկի առավելագույն սահմանաչափը հաշվարկվում է՝ կիրառելով վարկառուի պարտքային ծանրաբեռնվածության հարաբերակցությունը:

Բանկը կիրառում է ներքին մեթոդաբանություններ որոշակի կորպորատիվ վարկերի և մանրածախ վարկերի խմբերի համար: Այս սքորինգային մեթոդները մշակված են կոնկրետ վարկատեսակների համար և կիրառվում են վարկի ընթացքի տարբեր փուլերում: Որպես հետևանք, հնարավոր չէ կատարել վարկատեսակների խաչաձև սքորինգային համեմատություն, որը կհամապատասխաներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաճախորդների վարկերի մնացորդին: Այդպիսով, ավելի մանրամասն տեղեկատվություն չի ներկայացվում:

Հաճախորդներին տրված վարկերի որակական վերլուծությունն, ըստ դրանց կատարողականի, ներկայացված է ծան. 17-ում:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, գնահատվում են ըստ միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված ընթացիկ վարկանիշերի, եթե դրանք առկա են:

Ժամկետանց, սակայն չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով վճարումներն ուշացված են միայն մի քանի օրով: Ժամկետանց վարկերի հիմնական մասը չի համարվում արժեզրկված: Ժամկետանց, սակայն անհատապես չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է ծան. 16-ում:

2018 թ. հունվարի 1-ից հետո կիրառվող վարկային ռիսկի չափման մեթոդաբանությունը

Ռիսկերի կառավարման նպատակներով վարկային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված վարկային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի վարկային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված դեֆոլտի, դրանից բխող կորուստների գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի կորելացիաների հավանականության հետ: Բանկը վարկային ռիսկը գնահատում է դեֆոլտի հավանականության (ԴՀ/PD), դեֆոլտից առաջացած վնասի (ԴԱՎ/LGD) և դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (ԴԺԳԱ/EAD): Սա մոտ է ԱՎԿ-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Բանկն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Բանկի կողմից:
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է վարկային ռիսկի զգալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում վարկային տեսանկյունից արժեզրկված:
- Եթե ֆինանսական գործիքը վարկային տեսանկյունից արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»:
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ԱՎԿ/ECL-ը չափվում է առաջիկա 12 ամիսների ընթացքում ակնկալվող վարկային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով, որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր դեֆոլտի իրադարձությունների հետեւանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ԱՎԿ-ն չափվում է՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա:.
- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ԱՎԿ-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ:

- Ձեռք բերված կամ սկզբնապես վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ԱՎԿ-ն մշտապես չափվում է գործողության ողջ ընթացքի համար (փուլ 3):

ԱՎԿ-ները կարող են չափվել կորուստների գծով պահուստների միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Վարկի գործողության ողջ ընթացքում ԱՎԿ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի արժեզրկման իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Վարկի գործողության ողջ ընթացքում ԱՎԿ, այսինքն՝ ԱՎԿ, որն արդյունք է ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Լիարժեք ԱՎԿ-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Մնացած բոլոր այլ ֆինանսական գործիքների դեպքում ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ին համարժեք գումարի չափով:

Չօգտագործված վարկային գծերի և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ԱՎԿ-ն չափվում է՝ հիմնվելով 100% «վարկային ռիսկի փոխարկման գործոնների» (Credit Conversion Factor) վրա:

Ֆինանսական հաստատություններից, միջբանկային ավանդներից և թղթակցային հաշիվներից ստացվան ենթակա գումարները, պարտքային գործիքներում ներդրումները ենթակա են արժեզրկման՝ հիմնվելով 12-ամսյա ԱՎԿ-ի վրա: Հաճախորդների մասով դեֆոլտի հավանականության և LGD-ի հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող վարկային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է անհատական հիմունքով՝ կիրառելով հաճախորդի վարկային կորստի պահուստի դրույքաչափը: Եթե հաճախորդը բանկում վարկային ռիսկ չի ունենում, ապա օգտագործվում են հաճախորդի վարկային վարկանիշը և համապատասխան դեֆոլտի հավանականությունն ու LGD-ն: Բացի այդ, գնահատվում է նաև դեբիտորական պարտքի ակնկալվող ռիսկը: Եվ վերջապես, ԴՀ-ները, LGD-ները և ակնկալվող ժամանակահատվածը բազմապատկվում են՝ վարկային ակնկալվող պահուստը դեբիտորական պարտքերի համար հաշվարկելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկառուների վարկային ռիսկերի գնահատման նպատակով Բանկը մշակել է ՖՀՄՍ 9-ի պահանջների վրա հիմնված մեթոդաբանությունը:

Ակնկալվող վարկային կորուստները Բանկը չափում է անհատական, իսկ վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Անհատապես նշանակալի վարկային ռիսկը համարվում է այն վարկառուների կամ փոխկապակցված վարկառուների խումբը, որոնք ռիսկը գերազանցում է կանոնադրական կապիտալի 1 տոկոսը: Բացի այն, նրանց պետք է վարկային ռիսկի զգալի աճի հատկանիշներ դրսևորեն, ինչպիսիք են ժամկետանց օրերի ավելացումը կամ զգալի ֆինանսական դժվարությունները:

Վարկային ռիսկի զգալի աճը, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման, վարկային վարկանիշների և գրավադրումների իրական արժեքների մասին տեղեկատվությունը:

Անհատապես նշանակալի ռիսկերի ԱՎԿ-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշների են դրսևորում, չափվում է անհատական հիմունքով: Անհատապես նշանակալի ռիսկերի ԱՎԿ-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ չեն դրսևորում, չափվում են հավաքական հիմունքով:

Անհատական հիմունքով ԱՎԿ-ի չափումը

Անհատապես գնահատված վարկերի համար ԱՎԿ-ները չափվում են որպես պայմանագրով Բանկին տրվելիք դրամական միջոցների հոսքերի և բազմաթիվ ապագա տնտեսական

սցենարների վերլուծման արդյունքում Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեք, որը զեղչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Բացի այդ, հաշվի են առնվում նաև վարկի գծով գրավադրված ցանկացած ակտիվների մարումը և իրացումը:

Բանկը, որպես կանոն, գնահատում է գրավի իրացման արժեքը՝ հիմք ընդունելով 2 տարին որպես հավաքագրման և գնահատման՝ 25 տոկոսով կրճատում կատարելու ժամկետ: Ընդհանուր մոտեցումը փոփոխվում է կախված առանձին դեպքերից, եթե այլ հանգամանքները ցույց են տալիս, որ հավաքագրման և գնահատման կրճատում կատարելու ընդհանուր ժամկետը ողջամիտ չեն:

Հավաքական հիմունքով ԱՎԿ-ի չափումը

ԱՎԿ-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD),
- Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD),
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից: Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով:

Հավաքական գնահատումն իրականացվում է վարկառուի մակարդակով, այլ ոչ թե պայմանագրի մակարդակով:

Սեգմենտավորում

Հավաքական հիմունքով գնահատված վարկերը խմբավորված են ըստ իրենց վարկային ռիսկի հատկանիշների: Նման հատկանիշները ներառում են.

- Սեգմենտը/հատվածը
- Ժամկետանց օրերը
- Վերակազմակերպում
- Ապահովվածություն

ԱՎԿ-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեգմենտների կամ հատվածների. Հաճախորդներ, հիփոթեք, արտադրություն, գյուղատնտեսություն, այլ:

Դեֆոլտի սահմանումը

ԱՎԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումն իրենից ներկայացնում է ԱՎԿ-ի չափի գնահատումը: Ստորև նշվածները Բանկը համարում է դեֆոլտի իրադարձություն.

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ նյութական վարկային պարտավորություն Բանկին՝ հավաքական հիմունքով գնահատվող վարկերի պարագայում,
- Վարկառուի վարկը մեկից ավելի անգամ վերակազմակերպվել է,

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Դեֆոլտի գնահատման համար Բանկն օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից:

Գնահատվող տեղեկությունը կախված է նաև բացահայտման կարևորությունից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ և օգտագործվում ԱՎԿ-ի անհատական հիմունքով գնահատման համար վարկերի բացահայտման նպատակով, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը էականորեն զգալի շեմից ավելի բարձր է:

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա, ԱՎԿ-ի վրա:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակը Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված: Վարկառու վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, գրավի արժեքի զգալի նվազումը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, որոնք օգտագործվում են ԱՎԿ-ի անհատական հիմունքով գնահատման համար նախատեսված վարկերի բացահայտման համար, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործողության ողջ ընթացքի ԱՎԿ/ECL-ով:

ԴՀ մոդելը

Յուրաքանչյուր խմբի համար ԴՀ-ի չափը որոշելու համար Բանկն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և դեֆոլտի փորձի վիճակագրական վերլուծությունները վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարժեզրկվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում: Համանման խմբի դիտարկման համար ընտրվել է յոթ տարվա ժամկետ՝ 2012 թվականի հունվարից մինչև 2018 թվականի դեկտեմբերը: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի դեֆոլտի 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային ԴՀ-ները, մինչև սպառվի պորտֆելի մարման ժամկետը: ԴՀ-ի հաշվարկներ համար դեֆոլտ է սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը: Դիտարկվող ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ արժեզրկված վարկառուն համարվում է արժեզրկված դիտարման ողջ մնացած ժամանակահատվածում:

Ժամկետային (Point in Time PDs) ԴՀ-ները հաշվարկելու համար Բանկը տարբեր մակրո սցենարների ներքո կիրառում է նաև կանխատեսումներ:

LGD մոդել

Արժեզրկման մոդելի բաղադրիչներից մեկը դեֆոլտի դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է դեֆոլտի դեպքում կորուստը: Այն չափելու համար ըստ սեգմենտների արժեզրկված ռիսկերը նվազեցվում են գրավադրված դեպոզիտների և գրավադրված գույքի զեղչված իրացվելիության արժեքի չափով՝ կիրառելով հավաքագրման 2 տարվա ժամկետը և գնահատման 25 տոկոս կրճատումը: Չապահովված ակտիվների LGD մոդելներում հաշվի են առնվում արժեզրկված ակտիվների մարման դրույքաչափերը: LGD-ները չափվում են սեգմենտի, այլ ոչ թե առանձին վարկառուի մակարդակով:

EAD մոդել

EAD-ն դեֆոլտի դեպքում ակնկալվող ռիսկն է: Բանկը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

Կանխատեսումների ներառում

ԱՎԿ-ի չափման ժամանակ Բանկն կանխատեսված տեղեկություններ է օգտագործում: Այդ տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Դեֆոլտի հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են դեֆոլտի տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը դեֆոլտի միջին կշռված

հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ԱՎԿ-ի հաշվարկների համար: 12-ամսյա ԱՎԿ-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա ԴՀ-ով: Գործողության ամբողջ ընթացքի ԱՎԿ-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային ԴՀ-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրենց տարբեր սցենարների և կշիռների հետ միասին հրապարակվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

ԱՎԿ-ի հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեգմենտի համար սահմանային ԴՀ-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փուլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ԱՎԿ-ն, իսկ փուլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ԱՎԿ-ն: Վարկային պորտֆելի LLP-ի հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս տանալ հավաքական հիմունքով գնահատման 5 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույքաչափը: Այս դրույքաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը արկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2018 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

բ. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, երբ Բանկի շահույթները, կապիտալը կամ նրա՝ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը վատթարանում են՝ շուկայական տոկոսադրույքներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է Բանկի՝ տոկոսադրույքի և արժութային հնարավոր ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Բանկի ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է Բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա: Տոկոսադրույքի ռիսկը ծագում է Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքերի և նրանց իրական արժեքի վրա տոկոսադրույքների փոփոխությունների ուղղակի ազդեցության հնարավորությունից: Բանկի Տնօրենների խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների միջև տարբերությունների սահմանաչափ ժամկետային կտրվածքով: Դիրքերը վերահսկվում են և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանց ռիսկայնությունը ընդունելի շրջանակներում պահելու համար:

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական գործիքների տարբեր տոկոսադրույքի ռիսկերը ներկայացվում են ստորև աղյուսակում՝

(հազար դրամ)	Միջին լողացող տոկոսա-դրույք	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Հաշվեկշռա-յին արժեք
2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Պարտավորություններ							
Այլ փոխառու միջոցներ	Libor6+2.25% - 7.52%	10,101,728	4,231,924	101,104	-	-	14,434,756
		10,101,728	**4,231,924**	**101,104**	**-**	**-**	**14,434,756**

(հազար դրամ)	Միջին լողացող տոկոսա-դրույք	մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Հաշվեկշռային արժեք
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Պարտավորություններ							
Այլ փոխառու միջոցներ	Libor6+2.55% - 5.55%	357,824	2,791,308	-	-	-	3,149,132
		357,824	**2,791,308**	**-**	**-**	**-**	**3,149,132**

Գնային ռիսկ

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Բանկը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր, թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Բանկը կառավարում է գնային ռիսկն այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Բանկի չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Արժութային ռիսկ

Արժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով, որը գնահատվում է յուրաքանչյուր առանձին արտարժույթի, ինչպես նաև արտարժույթով պահվող ակտիվների և պարտավորությունների ամբողջ պորտֆելի համար: Յուրաքանչյուր արժույթի դիրքի մասով Բանկը սահմանաչափեր է հաստատել: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2018 թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,409,916	7,288,803	10,096,619	1,295,801	66,906	**38,158,045**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,142,576	9,176,666	1,404,248	452,424	36	**13,175,950**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,681,119	201,584	-	-	-	**3,882,703**
Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	71,471,900	56,944,494	5,196,546	16,835		**133,629,775**
Ներդրումային արժեթղթեր	19,131,502	620,724	-	-	-	**19,752,226**
Այլ ֆինանսական ակտիվներ	122,879	3,108	3,373	20		**129,380**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**115,959,892**	**74,235,379**	**16,700,786**	**1,765,080**	**66,942**	**208,728,079**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	20,204,342	314,706	-	-	-	**20,519,048**
Թողարկված պարտքային արժեթղթեր	102,880	1,958,080	-	-	-	**2,060,960**
Այլ փոխառու միջոցներ	23,198,499	37,174,770	3,677,240	149,094	1,195	**64,200,798**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	46,307,832	42,176,826	5,826,961	1,488,309	28,840	**95,828,768**
Այլ ֆինանսական պարտավորություններ	322,484	181,064	26,605	55,327	-	**585,480**
Ստորադաս փոխառություններ	705,853	2,676,296	-	-	-	**3,382,149**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**90,841,890**	**84,481,742**	**9,530,806**	**1,692,730**	**30,035**	**186,577,203**
Հաշվեկշռային բաց դիրք	**25,118,002**	**(10,246,363)**	**7,169,980**	**72,350**	**36,907**	**22,150,876**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժութային սվոփեր	(2,040,328)	9,400,298	(7,364,942)	145,120	(122,680)	**17,468**
Բաց դիրք	**23,077,674**	**(846,065)**	**(194,962)**	**217,470**	**(85,773)**	**22,168,344**

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2017 թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում (վերահաշվ.)՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,449,040	11,979,780	7,001,095	1,301,879	93,037	**35,824,831**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	**-**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,888,805	10,835,888	63,007	242,840	-	**13,030,610**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,087,212	209,650	-	-	-	**4,296,862**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	54,195,056	44,841,367	5,178,658	1,477	-	**104,216,558**
Ներդրումային արժեթղթեր	21,556,627	148,179	-	-	-	**21,704,806**
Այլ ֆինանսական ակտիվներ	41,108	80,337	8,687	4,121	-	**134,253**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**97,217,848**	**68,095,201**	**12,251,517**	**1,550,317**	**93,037**	**179,207,920**

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամեն
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	20,511,989	-	-	-	-	**20,511,989**
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,100	968,664	-	-	-	**1,068,764**
Այլ փոխառու միջոցներ	15,320,395	20,106,980	3,804,415	302,328	-	**39,531,118**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	38,338,377	46,653,034	5,376,060	1,307,139	29,288	**91,703,898**
Այլ ֆինանսական պարտավորություններ	215,095	56,589	13,892	29,828	-	**315,404**
Ստորադաս փոխառություններ	3,731,222	2,667,379	-	-	-	**6,409,601**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**78,217,178**	**70,463,646**	**9,191,367**	**1,639,295**	**29,288**	**159,540,774**
Հաշվեկշռային բաց դիրք	**19,000,670**	**(2,368,445)**	**3,060,150**	**(88,978)**	**63,749**	**19,667,146**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժութային սվոփեր	-	1,732,594	(1,740,300)	-	-	**(7,706)**
Բաց դիրք	**19,000,670**	**(635,851)**	**1,319,850**	**(88,978)**	**63,749**	**19,659,440**

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն է՝ ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժեվորվում է ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու նկատմամբ 10%-ի չափով:

	2018 թ.			2017 թ.		
	Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը		Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժեվորում	Արժեզրկում		Արժեվորում	Արժեզրկում
ԱՄՆ դոլար	10%	(84,607)	84,607	10%	(63,585)	63,585
Եվրո	10%	(19,496)	19,496	10%	131,985	(131,985)
ՈԴ ռուբլի	10%	21,747	(21,747)	10%	(8,898)	8,898

Զգայունության վերլուծության սահմանափակումները. վերևում բերված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Բանկի ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Բանկի ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Բանկի ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Բանկի ղեկավարության արձագանքը

կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել Բանկի կանոնադրական կապիտալի տատանումների:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Բանկի տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ և չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիությունը Բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկն ի վիճակի չի լինի ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջները բնականոն և արտասովոր պայմաններում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի գրավների հասանելիությունը, որն, անհրաժեշտության դեպքում, կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և դիվերսիֆիկացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ, Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է պահուստավորման նվազագույն պարտադիր ռեզերվը (տես ծան. 13-ը): Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր հնարավոր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ՝ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բաշխումը՝ մարման մնացած ժամկետների համաձայն: Մարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն, Բանկի կարծիքով, շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ: Ներդրումային արժեթղթերը, բացի բաժնային գործիքներից, ներկայացված են ցպահանջ և պակաս, քան մեկ ամիս կատեգորիաներում, քանի որ Բանկի ղեկավարությունը կարծում է, որ դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների արտահոսքի պահանջն ապահովելու համար: Ավելին, հաշվի առնելով Բանկի կողմից պայմանագրային պահանջների խախտումները փոխառու միջոցների մասով (տես ծան. 23), Բանկը համապատասխան փոխառու միջոցները, ինպես նաև մնացած փոխառու միջոցների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի ավարտին, ընդամենը 24,059,690 հազար ՀՀ դրամ գումարի, դասակարգել է որպես ցպահանջ (պայմանագրային պարտավորությունների փոխադարձ կատարման դրույթների շնորհիվ): Ղեկավարությունը ունի հաստատուն համոզվածություն առ այն, որ այս փոխառությունների գծով դրամական միջոցների հոսքերը տեղի կունենան համաձայն պայմանագրային պայմանների՝ հաշվի առնելով, որ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո Բանկը ստացել է համապատասխան զիջումներ այս խախտումների մասով, ինչպես նաև հաշվի առնելով ծան. 34-ում ներկայացված իրադարձությունները: Եթե համապատասխան զիջումները դրույթների խախտման մասով ստացված լինեին հաշվետու ժամանակաշրջանից առաջ, և համապատասխան

փոխառությունները դասակարգվեին ըստ իրենց պայմանագրային/ ականկալվող ժամկետայնության, ապա ստորև ներկայացված աղյուսակում զուտ դիրքը *Ընդամենը մինչև 12 ամիս* կկազմեր բացասական 19,301,851 հազար ՀՀ դրամ (2017: բացասական 27,869,735 ՀՀ հազար դրամ):

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-3 ամիս**	**3-12 ամիս**	**Ընդամենը մինչև 12 ամիս**	**1 -ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը 12 ամսից ավել**	**Ընդամենը**
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,158,045	-	-	**38,158,045**	-	-	**-**	**38,158,045**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	17,468	-	-	**17,468**	-	-	**-**	**17,468**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,834,632	-	1,649,555	**8,484,187**	2,721,169	1,970,594	**4,691,763**	**13,175,950**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,882,703	-	-	**3,882,703**	-	-	**-**	**3,882,703**
Հաճախորդներին տրված վարկեր	4,108,005	11,369,837	32,589,252	**48,067,094**	61,368,037	24,194,644	**85,562,681**	**133,629,775**
Ներդրումային արժեթղթեր	17,454,208	100,250	393,688	**17,948,146**	1,173,278	630,802	**1,804,080**	**19,752,226**
Այլ ֆինանսական ակտիվներ	121,308	4,077	3,295	**128,680**	217	483	**700**	**129,380**
	70,576,369	**11,474,164**	**34,635,790**	**116,686,323**	**65,262,701**	**26,796,523**	**92,059,224**	**208,745,547**
Պարտավորություններ								
Հետգնման պայմանագրեր	20,519,048	-	-	**20,519,048**	-	-	-	**20,519,048**
Այլ փոխառու միջոցներ	27,374,010	3,765,124	16,824,799	**47,963,933**	14,128,118	2,108,747	**16,236,865**	**64,200,798**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43,321,959	8,235,965	30,312,153	**81,870,077**	11,830,458	2,128,233	**13,958,691**	**95,828,768**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	26,421	-	**1,093,380**	967,580	-	**967,580**	**2,060,960**
Այլ ֆինանսական պարտավորություններ	344,409	234,813	6,258	**585,480**	-	-	**-**	**585,480**
Ստորադաս փոխառություններ	21,725	-	-	**21,725**	3,360,424	-	**3,360,424**	**3,382,149**
	91,581,151	**12,262,323**	**48,210,169**	**152,053,643**	**30,286,580**	**4,236,980**	**34,523,560**	**186,577,203**
Զուտ դիրք	(21,004,782)	(788,159)	(13,574,379)	**(35,367,320)**	34,976,121	22,559,543	**57,535,664**	**22,168,344**
Կուտակային տարբերություն	**(21,004,782)**	**(21,792,941)**	**(35,367,320)**		**(391,199)**	**22,168,344**		

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվ.)							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-3 ամիս**	**3-12 ամիս**	**Ընդամենը մինչև 12 ամիս**	**1 -ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը 12 ամսից ավել**	**Ընդամենը**
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,824,831	-	-	**35,824,831**	-	-	**-**	**35,824,831**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,057,125	437,162	1,650,374	**9,144,661**	3,567,805	318,144	**3,885,949**	**13,030,610**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	**4,296,862**	-	-	**-**	**4,296,862**
Հաճախորդներին տրված վարկեր	2,436,360	3,563,385	15,301,124	**21,300,869**	42,590,654	40,325,035	**82,915,689**	**104,216,558**
Ներդրումային արժեթղթեր	-	364,623	50,813	**415,436**	11,349,722	9,939,648	**21,289,370**	**21,704,806**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	134,253	-	**134,253**	-	-	**-**	**134,253**
	49,615,178	**4,499,423**	**17,002,311**	**71,116,912**	**57,508,181**	**50,582,827**	**108,091,008**	**179,207,920**
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ								
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	564		**564**	1,068,200	**-**	**1,068,200**	**1,068,764**
Հետգնման պայմանագրեր	20,511,989	-		**20,511,989**	-	-	-	**20,511,989**
Այլ փոխառու միջոցներ	198,342	1,944,036	5,096,009	**7,238,387**	31,033,960	1,258,771	**32,292,731**	**39,531,118**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,571,597	2,043,162	11,305,543	**70,920,302**	15,025,023	5,758,573	**20,783,596**	**91,703,898**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	104,912	210,493	**315,405**	-	-	**-**	**315,405**
Ստորադասված փոխառություն	-	-	-	**-**	-	6,409,601	**6,409,601**	**6,409,601**
	78,281,928	**4,092,674**	**16,612,045**	**98,986,647**	**47,127,183**	**13,426,945**	**60,554,128**	**159,540,775**
Զուտ դիրք	**(28,660,750)**	**406,749**	**390,266**	**(27,869,735)**	**10,380,998**	**37,155,882**	**47,536,880**	**19,667,145**
Կուտակային տարբերություն	**(28,660,750)**	**(28,260,001)**	**(27,869,735)**		**(17,488,737)**	**19,667,145**		

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չզեղչված մարման պարտավորությունների վրա:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	20,209,441	15,250	526	-	-	**20,225,217**
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,473	36,552	87,031	2,061,973		**2,204,029**
Այլ փոխառու միջոցներ	28,259,502	4,157,143	18,252,651	17,616,430	2,880,990	**71,166,716**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,892,659	8,764,690	31,574,393	13,535,828	2,433,801	**102,201,371**
Այլ ֆինանսական պարտավորություններ	585,480	-	-	-	-	**585,480**
Ստորադաս փոխառություններ	51,349	59,250	271,560	1,441,737	4,120,129	**5,944,025**
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**95,016,904**	**13,032,885**	**50,186,161**	**34,655,968**	**9,434,920**	**202,326,838**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	11,739,048					**11,739,048**
Արտահոսք	(11,721,580)					**(11,721,580)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվ.), հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չզեղչված մարման պարտավորությունների վրա:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	20,511,989	-		-	-	**20,511,989**
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,562	11,688	50,985	1,135,500		**1,203,735**
Այլ փոխառու միջոցներ	198,342	1,944,036	5,096,009	33,671,452	1,709,380	**42,619,219**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,571,597	2,043,161	11,305,543	16,500,498	6,200,446	**93,621,245**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	104,912	210,493	-	-	**315,405**
Ստորադաս փոխառություններ	-	-	-	-	6,800,590	**6,800,590**
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**78,287,490**	**4,103,797**	**16,663,030**	**51,307,450**	**14,710,416**	**165,072,183**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	1,732,594	-	-	-	-	**1,732,594**
Արտահոսք	(1,740,300)	-	-	-	-	**(1,740,300)**

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն իրենից ներկայացնում է ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որն առաջանում է Բանկի կողմից ֆինանսական գործիքներում ներգրվավվածությունից, այդ թվում՝ գործընթացների, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների գծով և արտաքին գործոնների ազդեցությամբ, բացի վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերից, մասնավորապես՝ իրավական և կանոնակարգային պահանջների արդյունքում առաջացող ռիսկերը և համընդհանուր ընդունված կորպորատիվ վարքագծի ստանդարտները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկերն այնպես, որ ֆինանսական կորուստների և վնասի կանխարգելումը համահունչ լինի Բանկի գործնական համբավի և ընդհանուր ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարման մեթոդների մշակման և գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում՝ գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների պահպանում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի կրճատում:

Բանկի ստանդարտներին համապատասխանությունն ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Այդ դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

33 Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա և դուստր ընկերությունների բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:
2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 73.71% (2017 թ.՝ 69.55%) կամ 16,408, 815 հազար դրամ (9,534,432 հազար ՀՀ դրամ) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին են պատկանում բաժնետոմսերի 2.20%-ը՝ գումարած մեկ բաժնետոմս (2017 թ.՝ 2.52%):

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են (2017՝ վերահաշվ.).

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2018 թ.		
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ, որտեղ Բանկն ունի ներդրում
Հաճախորդների տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	1,031,923	153,058	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	**2,664,389**	**138,134**	**-**
Նվազեցված՝ վարկային արժեզրկման պահուստ	(85,521)	(2,666)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	**2,578,868**	**135,468**	**-**
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	273,803	17,799	
Վարկային կորուստների մասով արժեզրկման կորուստներ/(վերականգնում)			
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	100,000	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա վարկեր, համախառն	**67,482**	**-**	**-**
Նվազեցված՝ վարկային արժեզրկման պահուստ	(7)	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա վարկեր	**67,475**	**-**	**-**
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի գծով տոկոսային եկամուտ	6,875	-	-
Հաճախորդների վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	845,554	369,357	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**677,395**	**446,312**	**-**
Տոկոսային ծախս ավանդների գծով	1,567	25,006	-
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	186,479	-	-
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**177,455**	**-**	**-**
Տոկոսային ծախս	23,587	-	-
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	6,409,601	-	-
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,382,149**	**-**	**-**
Տոկոսային ծախս	547,408	-	-
Մուտքեր արտոնյալ բաժնետոմսերի թողարկումից			
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Ավելացումներ	3,000,000	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,000,000**	**-**	**-**
Հիմնական միջոցների ձեռքբերում	**36,627**	**-**	**-**
Տրամադրված երաշխիքներ	**83,791**	**-**	**-**
Այլ ծախսեր			
Կոմիսիոն ծախսեր	478	-	-
Գովազդային ծախսեր	41,593	-	-
Ապահովագրական ծախսեր	132,896	-	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2018 թ.		
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ, որտեղ Բանկն ունի ներդրում
Ինկասացիոն ծախսեր	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	413,568	-	-
Գործուղման ծախսեր	40,465	-	-
Այլ ծախսեր	-	-	-

	2017		
	Բաժնետերեր	Հիմնական ղեկավար անձնակազմ	Դուստր ընկերություններ և ընկերություններ, որտեղ Բանկն ունի ներդրում
Հաճախորդների տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	751,877	97,458	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	**1,031,923**	**153,058**	**-**
Նվազեցված՝ վարկային արժեզրկման պահուստ	(51,879)	(1,625)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	**980,044**	**151,433**	**-**
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	133,964	12,825	-
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	-	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա վարկեր, համախառն	**100,656**	**-**	**-**
Նվազեցված՝ վարկային արժեզրկման պահուստ	(1,007)	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններին վճարման ենթակա վարկեր	**99,649**	**-**	**-**
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի գծով տոկոսային եկամուտ	5,101	-	-
Հաճախորդների վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	1,286,621	30,711	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**845,554**	**369,357**	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	23,923	59,366	-
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	458,716	-	-
Պարտավորություններ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**177,455**	-	-
Տոկոսային ծախս	19,663	-	-
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	5,399,302	-	-
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,409,601**	**-**	-
Տոկոսային ծախս	547,408	-	-

	2017		
	Բաժնետերեր	**Հիմնական ղեկավար անձնակազմ**	**Դուստր ընկերություններ և ընկերություններ, որտեղ Բանկն ունի ներդրում**
Հիմնական միջոցների ձեռքբերում	**41,933**	--	-
Տրամադրված երաշխիքներ	**69,439**	**-**	-
Այլ ծախսեր			
Կոմիսիոն ծախսեր	4,993	1,310	-
Գովազդային ծախսեր	46,978	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	-
Ինկասացիոն ծախսեր	-	-	165,848
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	426,568	-	-
Գործուղման ծախսեր	23,475	-	-
Այլ ծախսեր	48,000	-	-

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում տնօրենների և առանցքային ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրության չափը կազմել է 548,354 հազար ՀՀ դրամ (2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում՝ 400,509 հազար ՀՀ դրամ): Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Տնօրինության և Տնօրենների խորհրդի անդամներին:

34 Հետագա իրադարձություններ

Բանկը թողարկել է նոր կորպորատիվ պարտատոմսեր 2,100,000 ԱՄՆ դոլարի չափով, մարման ժամկետը՝ 2022 թ. մարտի 29, ֆիքսված արժեկտրոնային դրույքաչափը՝ 5.25%: 2019 թ. ապրիլի 30-ի դրությամբ Բանկը բաշխել է թողարկված պարտատոմսերի ողջ գումարը:

Գործընկեր Միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից նոր ֆինանսակավորում է հատկացվել Բանկին 2019 թ. փետրվարին 10,000,000 ԱՄՆ դոլարի չափով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված պայմանագրային պահանջների խախտումով բոլոր վարկերը մարվել են համաձայնագրերում սահմանված ժամանակացույցի համաձայն, առանց ուշացումների, 252,010,616 ՀՀ դրամի չափով:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը ստացել է զիջում երեք վարկատուներից երկուսի կողմից պայմանագրային որոշ պահանջների խախտման մասով: Երրորդ վարկատուի կողմից Բանկը ստացել է էլեկտրոնային հաստատում առ այն, որ վարկատուն չի պահանջելու վարկի վաղաժամկետ մարում: